

89199. - 192

U-12

01-14/I 38

891. 907-152
U-12

ՀԲԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ „ՍԱՍՈՒՆ“ ՏՊԱՐԱՆԻ № 1

ԿԸԶՄԵՑ—ՍԸԶՆԴԱՐԵՐՆ

„ՆՈՐ—ՔՆԱՐ“

(ԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆ)

Զար մարդիկ՝ երգ չունին:

ՇԻՆԼԵՐ



Հայ տպագրութեան 400-ամեակին

Գ Ո Ր Ի Ս

Տ Պ Ա Ր Ա Ն „ՍԱՍՈՒՆ“

1912

ԳԻՆՆ Է 30 Կ.

-6 NOV 2011

№ 1 ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ „ՍԱՍՈՒՆ“ ՏՊԱՐԱՆԻ № 1

891.99-192 ԿԸՋՄԵՑ—ՍԵՋԱՆԳԱՐԵԱՆ

13 APR 2011

U-122

uz

„ՆՈՐ-ՔՆԱՐ“

(ԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆ)

Զար մարդիկ՝ երգ չունին:

ՇԻՆԷՐ

1001
3616

ԳԻՆՆ Է 30 Կ.

Ն Ի Է Ր

Հայ տպագրութեան 400-ամեակին



Գ Ո Ր Ի Ս

Տ Պ Ա Ր Ա Ն „Ս Ա Ս Ո Ւ Ն“

1912

ԵՐԿՈՒ ԽՅՄԲ

Ժամանակն և հասակն իրանց երգն ունենւ։ Դա ամեն ժողովրդի ու անհատի յատուկ օրէնքն է։

Մեր ժողովրդական բանաստեղծներն ու երգիչ-աշուղներն էլ՝ օրւայ պահանջը բաւարարած լինելու համար՝ վերջին տարիներում տւին մի շարք երգեր, որոնք իրանց ժամանակի յատուկ արտայայտութիւնն և գոյնն ունենւ։

Անցան տարիներ, մարեցան այդ երգերը և սակայն՝ որպէս ժողովրդական մտքի ծնունդ, պահուում են որոշ երգարանների մէջ և հարկաւոր է, որ պահուեն։

Նման երգարաններ իրանց նիւթի և մտքի ոչ կանոնաւոր դասաւորման պատճառով, (բացառութեամբ ի հարկէ) տալ զպրոցական աշակերտների ձեռքը, մանաւանդ գաւառում, ուր նորա ձայնադրութիւն, նօտաներ չեն սովորում, այլ լոկ երգեր, մինք նպատակաշարմար չենք գտնում, որովհետեւ մանկան հարկաւոր են նրա հոգուն և սրտին մատչելի երգեր, ժողովրդական անմեղ մըրմունջներ, իսկ բարձր դասարանների համար ժողովրդական և ազգային այն երգերը, որոնք տարիներ շարունակ երգւել և երգւում են ժողովրդի լայն խաւերում և ունեն մեծ կիրառութիւն։

Մեր կազմած—Նոր-Քնարը, որի երգերը հաւաքել ենք աշակերտական նստարանից սկսած և հասցրել 300-ի, նրա մի մասը միայն լոյս ընծայելով՝ ցանկացել ենք, գաւառի համար երգերի մի ժողովածու տալ, որից շատերը կան վանաղան երգարաններում, շատերը մինչ օրս չեն տպագրւած, իսկ մի քանիսը թէ և հին, բայց զեռ ապրող և կենսունակ են մեղմում։

Իրրեւ աշակերտական երգարան, աւելորդ ենք համարել երգերը ամբողջապէս բերել և վերցրել ենք

երկարներից ամենագործածական, պարզ ու բովան-
դակալից մասերը:

Մեր հաւաքած երգերը լսել և սովորել ենք երգել
զխաւորապէս Արարատեան դաշտի և Կովկասի այլ և
այլ շրջաններում՝ ուսուցիչներից, ուխտաւորներից և
աշուղներից:

Մեր մի շարք շնորհալի բանաստեղծների ուշա-
գրութիւնն ենք խնդրում, որ նոցա երգերի համար
առանձին թոյլտուութիւն չ'սնդրեցինք, նախ՝ որպէս ժո-
ղովրդականացած նիւթեր և երկրորդ՝ որ չ'զիւտէինք
նոցա հասցէները, ուստի յուսում ենք, որ նոքա ներո-
ղամիտ կ'լինեն դրա համար, ի նկատի ունենալով, որ
հաւաքած երգերը նւիրւում են Հայ տպագրութեան
400-ամեակին, իսկ զուտ արդիւնքի 10⁰/₀ը յատկաց-
ւում է “Հայ գալրոցական ուսուցչութեան Ֆոնդին”:

ԿԱԶՄՈՂ.



1. Ե Ր Գ

Սիրուն թռչնակ, դու սոխակ,
Երգիր երգդ անուշակ.
Քեզ լսում են և երգում,
Փոքրիկ տղայք շարունակ:

2 ԹՈՉՆԻԿ

Թռչնիկն ահա, դէսլ ինձ դալով,
Ուղիս վերայ նստում է.
Կացում բռնած մի նամակիկ,
Հօրիցս ողջոյն բերում է:

Սիրուն թռչնիկ, թռի՛ր գնա,
Բարես տար և համբոյր.
Ես չեմ կարող քեզ բնկերել,
Դեռ դասըս չեմ վերջացրել:

3. Ձ Ա Գ Ո Ի Կ

Մեր ձագուկը փոստում նստած քնում է,
 Այ խեղճ ձագուկ հիւանդ ես դու
 Որ չես ուզում կուտ ուտել,
 Ձագն ուտում է, ձագն ուտում է, ձագն
 ուտում:

Ձագուկ, մեր չար կատուից զգուշացիր,
 Նա ունի սուր-սուր ճանկեր,
 Կարող է քեզ վնասել.
 Ձագուկ թռաւ, ձագուկ թռաւ, ձագ թռաւ:

4. ԾԻՏԸ ԾԱՌԻՆ

Ծիար ծառին ծըլւելում է
 ծիւ, ծիւ, ծիւ, ծիւ, ծիւ, ծիւ, ծիւ,
 Բազէն գլխին պըտըտում է
 վնւյ, վնւյ, վնւյ, վնւյ, վնւյ, վնւյ, վնւյ.
 Ծիար լոեց, ծիար վախեց,
 վնյ, վայ, վայ, վայ, վայ, վայ, վայ,
 Բազէ թըռռ, հն, հա, հա,
 Բազէն թռաւ, բազէն փախաւ,
 Ինչ լաւ էլաւ հէյ, հէյ, հէյ.
 Ծիարիկ—միարիկ, պիծիկ—միծիկ,
 Պըսպըտուրիկ, չալպըտուրիկ,
 Դու լաւ պըծար, չար բազէի
 Սուր ճանկերից հէյ, հէյ, հէյ:

5. Մ Ե Ղ Ո Ի

Հն ծաղեցաւ արեգակը,
 Հն ծաղիկեցաւ մանուշակը,

Մեղուն թողեց իր փեթակը,
 Տըզարզալով, տըզարզալով:

Մեղուն թռաւ ծաղիկէ ծաղիկ,
 Մեղրն առաւ քաղցր անուշիկ,
 Մումը տարաւ հոտոտ լուսիկ,
 Պըզպզալով, պըզպզալով:

Անուշ մեղրը մանր տոոց,
 Դեղին մումը ամեն սրբոց,
 Իսկ չարերին կըճ ու խայթոց,
 Կըսկըծալով, կըսկըծալով:

6. Ա Ղ Ք Ա Տ Կ Ի Ն

(ՖՐԱՆՍԵՐԷՆԻՑ)

Ցուրտը փչեց, ձմեռ սաստիկ,
 Ձիւնը ծածկեց գետինը,
 Ամենայն մարդ մտաւ իւր տուն,
 Պատասպարւիլ ցրտիցը:

Փամի դռան դողդողալով,
 Կանգնած է մի աղքատ կին,
 Նորա հանդերձ պատառ պատառ,
 Չունի շապիկ իւր հագին:

Անհամարձակ նա իւր ձեռքը
 Պարզում է անց կացողին—
 ,,Ողորմութիւն արէք, պարոն,
 Անտուն, անտէր աղքատին“:

7. ԵՐԿՈՒ ՓՈՔՐԻԿ

Երկու փոքրիկ նապաստակ,

Հանգիստ խոտ են կրծոտում,
Երբ գալիս է չար ուրաորդ,
Փիշտ, բոլորն են փախչում:

Երկու փոքրիկ մանուկներ,
Հանգիստ դաս են սովորում,
Երբ զալիս է ուսուցիչ,
Սու՛ս, ոտքի են կանգնում:

8. *ՕՐՕՐՈՅԻ ԵՐԳ (Թարգմ.)*

Ննջիր մանկիկ, իմ սիրասուն,
Օրօր եմ ասում:
Պայծառ լուսինն է մեզմ փայլում,
Քո օրօրոցում:

Կը պատմեմ քեզ, շատ հեքեաթներ,
Ու երգեր սիրուն,
Ննջիր, ծածկիր քո ջինջ աչեր,
Օրօր եմ ասում:

Քո ձեր զինւոր հայրդ ընկած
Մի ահեղ կռուում,
Ննջիր հանգիստ, սիրուն բալաս,
Օրօր եմ ասում:

9. **ԺԱՄԿՈՉ ԵՂԲԱՅՐ**

—Ժամկոչ եղբայր, ժամկոչ եղբայր,
—Վեր ելաւ, վեր ելաւ,
—Զանգակները զարկաւ, զանգակները
զարկաւ,
—Դիմ բօմ-բօմ, դիմ բօմ-բօմ:

✓ 10. ՄԱՅՐԻԿԻՆ ՖԱՅՏՕՆ

Մայրիկին ֆայտօն բերին,
 Գոյրիկին կառէթ.
 Հայրիկին պլոտի տաշկայ,
 Թաքեաբ չունենայ
 Հօյ, ամման, ամման,
 Հօյ, ամման, ամման,
 Հօյ, ամման, ամման,
 Հօյ, ամման, ամման,
 Մաշիկով աղջիկ,
 Կօշիկով, աղջիկ,
 Քու զեյրեն կարճ է,
 Շէկ սղի խարջ է:

Մայրիկին փառ բերին,
Բոյրիկին եսխնի.
Հայրիկին թանկ սպաս,
Ծաւար չունենայ.
Հօյ, ամման, ամման, և այլն. . . .

Մայրիկին դեյրա բերին,
Քոյրիկին կօֆտա,
Հայրիկին դավաչու չուխա,
Թե էլ չուհեհայ.
Հօյ, ամման, ամման, և այլն. . .

Մայրերիկին շէտապա բերին,
Քոյրերիկին առաջիկ.
Հայրերիկին մոթալ փափախ,
Էն էլ մէջը ծակ.
Հօյ, ամման, ամման, և այլն . . .

11. ԵՐԳ ՎԱՆԻ ԼԵԶԻՈՎ

Համբարձման երկուշաբթին
Առայ զփոսին ու զգերնդին,
Ընգայ ծովուն ծով յափան,
Ծորեցի ծոր թփեցի,
Մանրիկ, մանրիկ, խորմեցի,
Ռէհան ճիւղով կապեցի,
Հա մէկ եարոջ ճամփեցի:
Հանէր նանայ, նայնանայ:
Ջանէր նանայ, նայնանայ:

Թորդերես երկու ջուխտ ծամ,
Ջուխտ ծամեր մէջն էր նշան,
Կրգայ թէ պագնեմ նշան,
Գլորայ, ընգայ գնդան.
Հրովայ գնդան ճով է տեսի,
Մէջ վարդ է բոլոր ուէհան:
Հանէր նանայ և այլն . . .

Տարին տըսուերկու ամիս
Թորմաւ խնձորն ի գօտիս,
Խնձորի կէս խածուկ էր,
Չորս բոլոր արծթուկ էր,
Ճամփենք եարոջ դէ արիս:
Հանէր նանայ և այլն. . .

12. ՄԱՆՈՒԿ ԵՒ ԹԻԹԵՌ

Մանուկ

Սիրուն թիթեռ, ինձ ասա,
Թէ ինչո՞վ ես դու ապրում.
Ամբողջ օրը խաղում ես,
Ի՞նչպէս է որ չես յոգնում:

Թիթեռ

Սիրուն կանաչ դաշտերում,
Ես ապրում եմ համարձակ.
Ծաղկանց բուրմունքը անուշ,
Իմ կերակուրն է միակ:

Բայց իմ կեանքը շատ կարճ է,
Նա մի օրից չէ երկար.
Բնրի եղիր, ճվ մանուկ,
Խնայիր, ինձ ձեռք մի՛ տար:

13. ՆՈՐ ՏԱՐԻ

Ահա եկաւ նոր տարի,
Հետը բերաւ նոր բարի.
Մանր տղոց ուրախ օր,
Բարի դաւալ հօրն ու մօր:

Մանր տղայք են ուրախ,
Ունին կաղին, գոգինաղ,
Սալորի չոր, չամիչ, թուզ,
Փշատ, ունաբ և ընկոյզ:

Մանր տղայք չ'մոռնաք,
Աշխարհումս չէք մենակ.
Ուրիշ շատ խեղճ տղայք կան,
Աղքատ ու անօգնական:

Նորա հայր ու մայր չունեն,
Սև չոր հացի կարօտ են.
„Աղքատներին ողորմած
Եղէք“, կասէ ձեզ Աստուած:

14. ԶՈՐՍ ԵՂԱՆԱԿ

Մարտը տալիս է ճնծաղիկ,
Ապրիլ կապոյտ մանուշակ,
Մայիսին բացուում է վարդը,
Սոխակ երգում անուշակ:

Յունիսը մեզ խոտ է տալիս,
Իսկ յուլիսը առատ ցորեն,
Օգոստոսը տանձ ու խնձոր,
Եւ ուրիշ շատ հասուն մրգեր:

Սեպտեմբերը մեզ տալիս է
Խաղողի բոլոր տեսակը,
Հոկտեմբերը կարմիր գինի,
Նոյեմբերը բոզկն ու տակը:

Դեկտեմբերին ձիւն է գալիս,
Յունւարին ծածկում սար ու ձոր,
Փետրւարին սկսւում է
Փոփոխակի ցուրտ, տաք օր:

15. ԳԱՌՆՈՒԿ

Սիրուն, անմեղ իմ գառնուկ,
Բուրդըդ սպիտակ ու փափուկ,
Դաշտ վազելով ու արօտ,
Մօրդ քաշում ես կարօտ:

Մի լար գառնուկ սիրական,
Փոքրիկ տղի դու նման,
Կըգայ մայրդ հետը շատ
Կըբերէ քեզ անուշ կաթ:

16. ԴԵ ՀԵ, ԶԸՆԳԸ, ԶԸՆԳԸ.

Էս օր ուրբաթ է, պատ է,
Դէ, հէ, զընգը, զընգը, դէ, հէ, ջան,
Սըրտիկ արծաթի թաս է,
Դէ, հէ, զընգը, զընգը, դէ, հէ, ջան.

Սրտիկ, մալուլ մի մնա,—
Աշխարհ մարդու չի մընա:

Աշունն եկաւ ցօղալէն,
Ծառի տերեւ դողալէն,

Սըրտիկ, մալուլ մի մնա,
Աշխարհ մարդու չի մընա:

17. ՀՐԱԻՔՐ

Արիք, ընկերք, շուտ արէք,
Շուտով վարժատուն երթանք,
Դասերնէրս պատրաստենք,
Որ ժամանակին խաղանք:

Ով իւր դասը չ'գիտ է
Եւ կամ սովորել ծուլանայ,
Նորան ոչ խաղ կայ, ոչ կեր,
Այս է պատիժը նորա:

Դասատան մէջ աւելորդ
Խօսակցութիւն չըպէտք է,
Հապա լաւ ուշադրութիւն,
Այս մեր ամենիս պարտքն է:

Ով որ հանգարտ և սիրով
Լսէ իւր վարժապետին,

Նա կլինի մանաւանդ
Սիրելի և գովելի:

Մենք էլ կուզենք, որ լինենք,
Գովելի աշակերտներ,
Հասլա ուրեմն, եղբայրք,
Նստենք, կարգանք մեր գասեր:

18. ՄԱՆՈՒՇԱԿ

Դեռ ուր է ծիծեռ,
Դեռ ուր է սոխակ,
Գարնան կարապետ,
Եկաւ մանուշակ:

Երկնային խունկը,
Զորս կողմը բուրեց,
Նորածին աշխարհ
Նախ նա համբուրեց:

Երկինքն է անամպ,
Շողշողուն արև,
Տանք մանուշակին,
Երեխայք բարև:

Որ մեր դաշտերին
Բերաւ նոր գարուն,
Նախշուն հաւերով,
Ծաղկով զարդարուն:

19. ԵՐԳ ԱՐԱԳԻԻ

Արագիլ, բարով եկիր,
Դուն արագիլ, բարով եկիր:

Դու գարնան նշան բերիր,
Դու մեր սրտիկ զւարթ արիր:

Արագիլ, մեր տուն իջիր,
Դուն արագիլ մեր տուն իջիր.
Մեր խաղի ծառին բունիր,
Դու մեր սիրուն ծառին բունիր:

Արագիլ, երբ գնացիր,
Դու մեզանից երբ գնացիր,
Ա՛խ փչեցին բուք ու բորան,
Ծաղիկները ամեն տարան:

20. ԵՐԳ ԳԱՐՆԱՆ

Ահա եկաւ մեր գարուն
Ու զարդարեց դաշտերուն.
Գոյն—գոյն ծաղկունք մեզ բերեց,
Սիրուն գարուն մեր գարուն:
Գոյն—գոյն ծաղիկներ
Գնանք քաղելու,
Տէրին փառք տալու:

Զմռան չորցած գետինը
Տեսէք ինչո՞վ է ծածկած,
Կարմիր, դեղին շուշանը
Զորս բոլորն են սփռած:
Գոյն—գոյն և այլն . . .

Վարդի թփեր կարգ ի կարգ
Բնութիւնից բուսել են,
Իսկ նոցա մէջ բարդ ի բարդ
Մանուշակներ բուրում են:
Գոյն—գոյն և այլն . . .

21. ԳԱՐՆԱՆ ԿԱՐԱՊԵՏ

Մարտն անցաւ, հասաւ ապրիլ գեղեցիկ,
 Հեռու աշխարհից եկաւ ծիծեռնիկ.
 Բարձր դու եկար, գարնան կարապետ,
 Բուն շինողներից ամենից վարպետ:

Կռուկներ թռաւ գնաց վերելից,
 Սոխակն էլ փախաւ մեր պարտէզներից.
 Մէկ դու մնացիր ճնճողներէ հետ,
 Սիրուն ծիծեռնակ, գարնան կարապետ:

Պատուհանիս մօտ շինէ քո բունը,
 Անուշ ճուղղով երգէ գարունը.
 Ածա՛ս ձու, հանէ գեղեցիկ ձագեր,
 Ու մնա՛ մեզ մօտ մինչև սեպտեմբեր:

22. Մ Ա Յ Ի Ս

Մայիսը նոր օր բերում,
 Եւ մեր հողին է վառում.
 Թող տունդ դուրս վազի,
 Ճակտիդ պտակ հիւսի:

Շէկ արևն է փայլում,
 Կանաչը գետին ծածկում,
 Թռչնոց երգ, սրբնդի ձայն,
 Հեռից է լսում:

23. ՃԱԽԱՐԱԿԻ ԵՐԳ

Մանիր, մանիր, իմ ճախարակ,
 Մանիր սիպտակ մալանչներ,

Մանիր թեւեր հաստ ու բարակ,
 Որ ես հոգամ իմ ցաւեր:

Ձէթ եմ ածել ականջներդ,
 Նոր շինել եմ շրթուիկ,
 Դէ՛հ, շուտ շարժիր լայն թեւերդ,
 Ոստեր շինիր սրբուիկ:

Տիգրանիկս դուրբայ չունի,
 Հանդ է գնում ոտաբաց,
 Գաբրիէլս չուխայ չունի,
 Միշտ անում է սուգ ու լաց:

Ջրալ չունենք, չաթու չունենք,
 Ոչ սամոտէն, ոչ պարան,
 Այսպէս աղքատ դեռ եղած չենք,
 Կարբել է ամեն բան:

Դեռ հարս էի, որ գործեցի,
 Քանի կարպետ, խալիչայ,
 Բայց դրանցից շուտ դիւլեցի,
 Հիմա չունիմ մի քեջայ:

24. ՁՄԵՌ.
ՄԱՆՈՒԿՆԵՐ.

Ծածկեց փողոց սիպտակ ձիւնով,
 Օհ, արդէն ձմեռ . . .
 Մեզ հիւր եկաւ, եկաւ բարով
 Մեր նանին՝ ձմեռ:

ՏԱՏ

Որդիք, բերում եմ ձեզ համար,
 Եւ այս եղևին.



Կարգարեմ այս տօնածառ,
Կանֆէկտներ կլինին:

ՏՕՆԱԾԱՌ

Ի՜նչ սիրուն է տօնածառը՝
Զորս կողմից լուսաւորւած.
Ի՜նչ խուճուճ է, ի՜նչ զալար է՝
Մինչև ծայրը զարգարւած:

Եւ ի՜նչ ուրախ երերում են,
Նրա զարգերը ոսկեղէն,
Ոստիկները ծանրացնում են,
Ոստիկները ու քաղցրեղէն:

Դէ, մանուկներ, իմ փարելի,
Էլ ի՜նչ իզուր սպասենք,
Երգենք երգեր մեր սիրելի,
Ու յետոյ նաև պարենք:

«Մանկ. պարտէզ»

25. ԲԱՐԻԿԵՆԴԱՆ

Գնացէք, տեսէք՝ ո՞վ է կերել այգին.—
Գնացին, տեսան այծն է կերել այգին.—
Այծն ու այգին,

Ձեզ բարիկենդան, մեզ բարի գատիկ:—

Գնացէք, տեսէք ո՞վ է կերել այծը,—
Գնացին, տեսան գայլն է կերել այծը,—
Գայլն ու այծը
Այծն ու այգին:—

Ձեզ բարիկենդան, մեզ բարի գատիկ,—

Գնացէք, տեսէք ո՞վ է կերել գայլը.—
Գնացին, տեսան սուրն է կերել գայլը.—

Սուրն ու գայլը,

Գայլն ու այծը

Այծն ու այգին,—

Ձեզ բարիկենդան, մեզ բարի գատիկ:

Գնացէք, տեսէք ո՞վ է կերել սուրը.—
Գնացին, տեսան ժանգն է կերել սուրը:—
Ժանգն ու սուրը,
Սուրն ու գայլը և այլն. . :

Կրկնել նոյն ձևով. —

Ով է կերել ժանգը.

Իւղն է կերել ժանգը.

Իւղը—մուկն է կերել.

Մուկը—կատուն է կերել.

Կատուն—հարսն է տարել.

Հարսին—փեսան է տարել.

Փեսին—Տէրն է տարել.

26. ԱՐՄԻԿԻ ԵՐԳԸ.

Աղջկերք, պար բռնեցէք,
Արմիկի երես գովեցէք,
Ա՛յ երես, շարմաղ երես,
Դու մեզ չթողնես սկերես:

Բարձր սարէն պաղ ջուր կուգայ,
Արմիկի երես կը լւայ.
Ա՛յ երես, արև երես,
Դո շափաղով մեր սիրտ կերես:

Աղջկերք, պար բռնեցէք,
Արմիկի աչեր գովեցէք.
Ա՛յ աչեր, սիրուն աչեր,
Արևի պէս փայլուն աչեր:

Ո՞վ պատուեց վագրի բերան,
Արմիկ պատուեց վագրի բերան,
Վագրի բերան—ահա այսքան—
Ժանիքները մէկ—մէկ գերան:
— 2. Ա.

27. ԱՂՈՒՏՍԻ ԵՐԳԸ

Աղուէս գնաց, մտաւ ջաղաց,
Թաթեր վերուց մի բոլ խաղաց:
—Հարա՛յ, աղուէս պարո՛ն աղուէս,
—Աշխարհքի մէջ չը կայ քու պէս:

Մի կոտ ու կէս կորեկ աղաց,
Էն էլ շալակն առաւ գնաց:
—Հարա՛յ, աղուէս և այլն:

Աղուէս կերաւ գեղի հաւեր,
Փարւազ տաւ վերի կալեր:
—Հարա՛յ, աղուէս և այլն:

Աղուէս պառկէ բըրչոտ կողին,
Թաթեր գնէ սիպտակ հողին:
—Հարա՛յ, աղուէս և այլն:

Աղունք բըռնենք կուղ ու աղուէս,
Ասի, կարգիմ իմ Օհանէս:
—Հարա՛յ, աղուէս և այլն:

Էլ գին չարաւ յէլ տարուայ պէս,—

Ազապ ֆնաց իմ Օհանէս:
—Հարա՛յ, աղուէս և այլն:

28. ԵՐԱԺԻՇՏՆԵՐ

Մենք երաժիշտներ ենք,
Շատ նւագարաններ լաւ ածում ենք,
Ունինք ջութակ, տաւիղ, սրինգ,
Դաշնամուր, ծնծղայք և թմբուկ:


Զորօրինակ, զորօրինակ,
Ա՛յ ձեզ ջութակ.
Պիլի, լիլի, լիլի,
Պիլի, լիլի, լիլի,
Այսպէս մենք ածում ենք,
Ա՛յ, այ, այ, այսպէս մենք ածում ենք:

Մենք երաժիշտներ ենք,
Շատ նւագարաններ լաւ ածում ենք,
Ունինք ջութակ, տաւիղ, սրինգ,
Դաշնամուր, ծնծղայք և թմբուկ:

Զորօրինակ, զորօրինակ,
Ա՛յ ձեզ տաւիղ.
Ծիմբի, ծիմբի, ծիմբի,
Ծիմբի, ծիմբի, ծիմբի,
Այսպէս և այլն:

Մենք երաժիշտներ ենք,
Շատ նւագարաններ և այլն,
. . . այ ձեզ սրինգ.
տրիւ, լիւ լիւ լիւ լիւ լիւ:
. . . այ ձեզ դաշնամուր

Տրա լա լա լա լա լա լա լա
 . . . այ ձեզ ծնծղայք
 Ծինձա, ծինձա ծինձա.
 . . . այ ձեզ թմբուկ.
 Բում, բում, բում, բում, բում, բում,
 և այլն:



29. ԼԷՊ ՀՕ

Լէպ հօ, լէ, լէ } կրկնել
 Լէպ հօ, լէ, լէ }
 Հօղալլօ ջան, հօղալլօ ջան, հօղալլօ,
 Գեօղալ շիրին, մարալօ ջան, մարալօ:
 Հով, հով հով էղնի,
 Եարս քամարով էղնի.
 Հով, հով հով էղնի,
 Եարիս տունը ծով էղնի.
 Դէ թընէք, թընէք, թողը հանէք,
 Մեր գուշմանի աչքը հանէք.
 Դէ զարնէք, զարնէք թողը հանէք,
 Մեր գուշմանի գեօղը հանէք:

30. ՄԱՐՄՆԱՄԱՐԶ

Դէհ, աղայք ելնենք,
 Մարմամարդ անենք.
 Առնենք սղոցը,
 Փայտէ կտրոցը,

Փայտը սղոցենք,
Կտորներ անենք.
Մէկ, երկու, երեք,
Մէկ, երկու, երեք,
Փըռը, փըռը, փըռը, փըռ,
Փըռը, փըռը, փըռը, փըռ,
Փըռը, փըռը, փըռը, փըռ,
փըռ, փըռ:

31. ԵԼԷՔ ՄԱՆՁԵՐ

Ելէք, մանչեր, ելէք քոչերը բառնանք.
Էրթանք վագգալ ու Դիլիջան ետ դառնանք:

Թաւէն ծակ է, եղ չկայ,
Փեսէն եկաւ տեղ չկայ,
Փեսին շատ երես միք տայ,
Փեսին էյտիբար չկայ:

Սև ունքեր կամար—կամար,
Նս կապրեմ քեզի համար,
Օլտը տարի սև հագայ,
Բու ազիդ խաթեր համար:

Դու մի հատ թառլան դուշ ես,
Մեր բաղում բուսած նուշ ես,
Աստուած վկայ, սուտ չկայ,
Ինձ համար շատ անուշ ես:

Ամպել ա կամար—կամար,
Կապել ես ոսկէ քամար,
Դու ուրիշ միտք մի անի,
Մի ջան ունիմ քեզ համար:

32. ՀՕՅ ՆԱՂԱՆ ԻՄ

Հօյ, Նաղան իմ, Նաղան իմ,
Ջան, Նաղան իմ, Նաղան իմ.
Նաղան, դու բարով եկար,
Կանաչ սարերով եկար,
Խոր—խոր ձորերով եկար:

Գարնան սիրուն ծաղիկ ես,
Հօյ, Նաղան իմ, Նաղան իմ,
Ինձ համար աղունիկ ես,
Ջան, Նաղան իմ, Նաղան իմ,
Գլխիս վրով պտիտ տուր,
Հօյ Նաղան իմ, Նաղան իմ,
Նախշուն—թե թիթեռնիկ ես.
Ջան, Նաղան իմ, Նաղան իմ:
Նար ջան, դու բարով եկար,
Կանաչ սարերով և այլն:

Սարեր, ձորեր, յետ դացէք,
Իմ եարի ճամբէն բացէք,
Նար եարի հետ խօսելիս,
Ականջ արէք, իմացէք:

Նըշի ծառին նուշ կըլնի, + Δ
Վարդի հոտն անուշ կըլնի,
Էրնեկ էն աղջկան,
Սիրած եարի թուշ կըլնի:

33. ՋԱՆ-ԻՄԱՆ

Էլ ա էրթիս, տփի, տփի,
Ախ, ջան—իման, ջան—իման,

Եարս սուն չէր նստայ լացի.

Ջան—իման, ջան—իման.

Ձինար բոյիդ ես դուրբան,

Ջան—իման, ջան—իման,

Սե աչերուդ ես դուրբան:

Մեր սուն, ձեր սուն, մօտիկ—մօտիկ,

Ախ, ջան—իման, ջան—իման,

Ես դու նստենք իրար մօտիկ,

Ջան—իման, ջան—իման.

Ձինար բոյիդ և այլն:

Ձեր բաղի դուռը բաց ա,

Ախ, ջան—իման, ջան—իման,

Ոտներս շաղով թաց ա,

Ջան—իման, ջան—իման.

Ձինար բոյիդ և այլն:

Ինձանից հեռացել ես,

Ախ, ջան—իման, ջան—իման,

Աչքերս լիքով լաց ա,

Ջան—իման և այլն:

34. ԾԱՄԹԵԼ

— Իմ գլխու ֆութէն կիտամ,

Դէ խանա ծամթէն ի ծովէն.

— Լողվորի մէկ լէ ես եմ,

Չեմ խանա ծամթէն ի ծովէն:

Եար ունիմ, եար ունիմ,

Բախճի միջին վարդի ծառ,

Եար ունիմ, եար ունիմ,

Վարդը քաղեմ արի տար:

— Իմ գլխու չամբար կիտամ,

Դէ խանա ծամթէն ի ծովէն.

— Լողվորի մէկ լէ ես եմ,

Չեմ խանա ծամթէն ի ծովէն:

Եար ունիմ, եայլն:

— Իմ խաքի շաղիկ կիտամ,

Դէ խանա ծամթէն ի ծովէն.

— Լողվորի մէկ լէ ես եմ,

Չեմ խանա ծամթէն ի ծովէն:

Եար ունիմ, և այլն . . .

— Իմ վզի վզնոց կիտամ,

Դէ խանա ծամթէն ի ծովէն.

— Լողվորի մէկ լէ ես եմ,

Չեմ խանա ծամթէն ի ծովէն:

Եար ունիմ, և այլն . . .

35. ԵՍՅԼԻ

Գութանը հաց եմ բերել,

Բերանը բաց եմ բերել.

— Բլբլուն երգեց, կաքաւ լռեց,

— Ձայնն ընկաւ ժայռերը:

Տես քեզ ուրբան եմ սիրել,

Չուկը տաղկած եմ բերել.

— Բլբլուն երգեց և այլն:

Գութանը սար կը վարի,

Շէկ աղջիկ հաց կտանի.

— Բլբլուն երգեց և այլն:

Շէկ աղջկայ մագերը,

Խեղքս հիման կըտանի.
— Բըլբուլն երգեց և այլն:

Էս օր գութանը մերն ա,
Մաճ բըռնողը իմ հէրն ա.
— Բըլբուլն երգեց և այլն:

Նզնարած շէկլիկ տղէն,
Աշխարհ գիտի, իմ տէրն ա.
— Բըլբուլն երգեց և այլն:

36. ԿՈՏ ՈՒ ԿԷՍ

Կոտ ու կէս կորեկ ունիմ ցանելու խամար,
Ճընճղուկներ ժողւած եկան ուտելու խամար.
Կըզլայ գետնէն քար վերուցի զարնելու խամար,
Թռան գացին, բերդի տանիս փախնելու խամար:

Ճընճղկիկ, կարմիր տուտիկ,

Սիպտակ փորիկ,

Կուտեն կուտիկ,

Խմեն ջրիկ,

Առի եզրիկ,

Փըստիկ, մըստիկ,

Զըստիկ, մըստիկ,

Փախնեն երթան,

Ման գալու խամար:

Աղջըկերք, գոգնոց կապին, փետրելու խամար,
Խարսերը իրար ընկան, կրակի խամար.

Պառաւհեր, կուզ—կուզ եկան եփելու խամար,
Տէրտէրներ ժողւան եկան ուտելու խամար:

Ճընճղկիկ,

Կարմիր տուտիկ,

Սիպտակ փորիկ,

Կուտեն կուտիկ և այլն:

37. ՃԱՄԲԱՅ ՏԻԷՔ

5+

Կուռտիկ ունիմ գեղին ա,
Ճամբայ տւէք թող տուն գայ,
Իմ եարը ձեր գեղին ա,
Ճամբայ տւէք թող տուն գայ:

Սարերը սնձոտել ա,
Ճամբայ տւէք թող տուն գայ,
Ոչխարը բըգոտել ա,
Ճամբայ տւէք թող տուն գայ:

Տաւարը նստոտել ա,
Կանաչը պառկոտել ա.

Հօտաղ քո մերը մեռնի,
Շորերդ կեղտոտել ա:

Ամպել ա, թօն չի գալիս,
Մթնել ա, տուն չի գալիս.

Էս անտէր բարձի վրայ,
Առանց եար քուն չի գալիս:

38. ԻՆՋԻՆԱՐ ԵՍՐ ԶԱՆ

Ինջինար եար ջան,
Փունջինար եար ջան,
Ո՞վ է բան ասել,
Սիրական եար ջան:

Էս եանը քամի
Էն եանը քամի,
Արաղի վրէն
Բանըմ ա գեամի:

Էս եանը մուխ ա,
Էն եանը մուխ ա,
Ախպէրս էկաւ,
Հազինը չուխայ:

Էս եանը պատ ա,
Էն եանը պատ ա,
Քաղքցուն կանեմ,
Որ վողը շատ ա:

Էս եանը բուլքի,
Էն եանը բուլքի,
Քաղքցին էկաւ,
Հազինը չուլքի:

Էս եանը բռեխ,
Էն եանը բռեխ,
Գիւղացին էկաւ,
Հազինը արեխ:

Էս եանը պոպոք,
Էն եանը պոպոք,
Քաղքցին էկաւ,
Հազինը սապօք:

39. ՏՈՒՆ ԱՐԻ

Տուն արի, տուն արի, տուն, ախպէր,
Արի, իմ խօրօտ ախպէր:

Սարերը ման եմ եկել
Տուն արի, տուն արի, տուն, ախպէր,
Դաշտերը բան եմ եկել,
Արի իմ խօրօտ ախպէր:

Ասին ախպէրդ է եկել,
Գըժի նման եմ եկել:

Էս զիշեր կանցնի դժւար,
Կերթայ բարակ ու երկար.

Իմըս որ ախ ու վախով,
Քոնրդ ինչպէս կանցնի, եար:

Չորերն ի վեր հանդեր ա,
Չուրը տունս քանդեր ա.

Շուտ արա, յետ դարձիւ եկ,
Սիրածը տանն անտէր ա:

40. ՀՕՅ ԵՍԲ

Հօյ եար, հօյ եար,
Աղիդ եար ջան, դուռը բաց.
Հօյ եար, հօյ եար,
Ոտներս ցրտուն գնաց.
Ոտներս—ոտներս ցրտուն գնաց:

Հօյ եար. Պաղ ես ձմեռայ սառից,
Հօյ եար. Ամուր ես գու լիւ քարից.
Հօյ եար. Ետեկ ինձ քաշ տալով,
Հօյ եար. Տարար գցեցիր սարից:
Հօյ եար ե այլն:

Ձիւն ա գալի վերից,
Ջուր ա կաթում տերից.
Իմ պարզ օրս ամպել ա,
Անբախտ եարի երեսից:
Հօյ եար ե այլն:

41. ՎԱՐԴ ԿՕՇԻԿՍ

Վարդ կօշիկս, վարդ կօշիկս,
Վարդից գեղեցիկ մաշիկս:

— Մեր տան մէջը քնող տղայ,
Կարմիր խնձոր ծախող տղայ,
Վարդ կօշիկս գտնող տղայ,
Տղայ, զրկէ վարդ կօշիկս:

— Ձեր տան մէջը քնել չեմ ես,
Կարմիր խնձոր ծախել չեմ ես,
Վարդ կօշիկդ գտել չեմ ես,
Իմ մօտս չէ վարդ կօշիկդ:

— Լաւ օրս եղաւ ախ ու վախ,
Կորցուցի կօշիկս, աւաղ,
Հայի տղայ, հոգուդ մատաղ,
Տղայ զրկէ վարդ կօշիկս:

— Որ մօտս չէ ուրդից ճարեմ,
Ազնիւ աղջիկ, հոգիդ սիրեմ,
Եթէ գտնեմ յետ կուղարկեմ,
Իմ մօտս չէ վարդ կօշիկդ:

42. ՄԱՐԱԼՕ—ՋԱՆ.

Մարալօ, ջան մարալօ, մարալօ.
Մարալօ, սարի աղջիկ դարալօ:

Մարալօ. ջաղացս մանի, մանի,
Մարալօ. քունս անոյշ կտանի.
Մարալօ, ջան և այլն:

Իմ եարս սարում քօլում,
Իմ քունը հնց կը տանի:

Հանդէն գաս գեղը մտնես,
Իմ քցած տեղը մտնես.

Ինձնից զիւման եար բռնես,
Բէյմուրվաթ հողը մտնես:

43. ՂԱՐԻԲ ԲԸԼԲՈՒԼ

Ուստի՞ կուգաս, զարիբ բըլբուլ,
Դու մի լաց լի, ես եմ լալու,
Բըլբուլ, բըլբուլ,
Բըլբուլ, բըլբուլ ջան.
Դու վարդ պըտրէ, ես գեօղալին.
Բըլբուլ, բըլբուլ,
Բըլբուլ, բըլբուլ ջան:

Արի, բըլբուլ, խօսի բառն,
Օրհնուի քո եկած սարըն.
Բըլբուլ, բըլբուլ,
Բըլբուլ, բըլբուլ ջան.
Քե վարդն էրեց, ինձ իմ եարն
Բըլբուլ և այլն:

Սալբիի նման կանաչ եմ,
Արի, խօսի. ձայնդ ճանաչեմ
Բըլբուլ, և այլն.
Դու վարդ կանչի, ես եար կանչեմ.
Բըլբուլ և այլն:

44. ՍՕՆԱ ԵԱՐ

Սօնա եար, Սօնա եար,
Սօնա զիլբար, Սօնա եար.

Վարդավառը դալիս ա,
Սօնա եւր, Սօնա եւր,
Ծաղիկը ցնծալիս ա.
Սօնա դիլբար, Սօնա եւր.

Այ գիւլում կանչող աղջիկ,
Սօնա եւր, Սօնա եւր,
Ձէնդ ծրլվրալիս ա.
Սօնա դիլբար, Սօնա եւր,

Նշի ծառին նուշ կըլնի,
Վարդի հոտն անուշ կըլնի,
Երնէկ էն աղջըկան՝
Սիրած ետրին թուշ կըլնի:

45. ԵԼՆԵՆՔ ՍԱՐԵՐԸ

Ելնենք սարերը սէյրան,
Ես մարալ եմ դու ջէյրան:

Աշխարհքի մայն ինչ՞ կանեմ,
Ելնենք սարերը սէյրան.
Արի քեզ սարը հանեմ,
Ես մարալ եմ դու ջէյրան:

Թէ թեւես բեզարեց,
Գլխիս վրայ կը տանեմ:

Մողնու գեօլում լողացայ,
Մողնու շուշէն գողացայ.

Եօթը տարի հիւանդացայ,
Եարրս եկաւ լաւացայ:

46. ԱՌՆԵՄ ԵՐԹԱՄ

— Առնեմ, երթամ էն սարը,
— Առնեմ, երթամ էն սարը,
— Առնեմ, երթամ էն սարը,
— Սէր անելով իմ ետրը:

Վրան եմ զարկել զարին,
Պայման եմ դրել տարին.
Տարին թող գայ, լրանայ,
Հետը բերէ իր բարին:

Առնեմ, երթամ և այլն:

Հէնց որ ծաղկի արեւը,
Քեզի զրկեմ բարեւը,
Իմանամ դու իմ ետրն ես,
Առնեմ, ելնեմ վերեւ:

Առնեմ, երթամ և այլն:

47. ԱԼ ՈՒ ԱԼԻԱՆ

Ալ ու ալւան ես հագել,
Կարմիր լալա ևս դառել,
Սուրէյի կտր մէջքդ
Փածփուշաներով ես պատել:

Ալ ու ալւան ես հագել,
Ախպէր ջան, քէ զուրբան,
Մեր գիւմանը դու ես զու:

Առիւծի պէս կայնել ես
Բեզերդ ոլորել ես,
Սեռս բեզերիդ զուրբան,
Յաղթանակը տարել ես:

Առիւծի պէս կայնել ես
Ախպէր ջան, և այլն . . .

Ձեռքդ թւանդ ես առել,
Դուշմանի դէմ ես կանդնել,
Ինձ ասա զլիսիդ զուրբան
Բինիշդ հով է կարել:

Ձեռքդ թւանդ ես առել
Ախպէր ջան ե ալին:



48. ԽՆԿԻ ԾԱՌ.

Մեր զուանը խնկի ծառ, զիւլում ջան,
Ձեր զուանը խնկի ծառ, զիւլում ջան:

Մարալ, մարալ, ման արի, զիւլում ջան,
Ջէյրան, Ջէյրան, տուն արի, զիւլում ջան:

Ամպել ա, շուտ տուն արի,
Մթնել ա, շուտ տուն արի:

Կովի հորթը կապեցի,
Նստայ տակը կթեցի:

Դընա, զընա, հեաիդ եմ,
Կարմիր խնձոր գօտիդ եմ:

Դու ինձ էտակ չես թողնի,
Որակեղ երթաս մօտիդ եմ:

49. ԴՈՒ ՆՍՏԵՆԷՆ ԵՍ

Դու նստել ես դօշակին,
Ուշ ու միտքդ փէշակին:
Խմել ես նստն գինին,
Հոտ քաշել մանուշակին:

Արեւ կամար—կամար,
կապել ես ոսկէ քամար.
Յիսուսն օր պատ եմ պահել,
Իմ աղբօր ճամբի համար:

Սարի խոտը ծեղւէ ծեղ,
Ընկեր երթանք միատեղ.
Որ հարամին վրայ տայ,
Գլուխս տամ գլխիդ տեղ:

Սարէն կ'գայ ձիաւոր,
Մեր տունը հարկախաւոր.
Հրէս եկաւ իմ ախպէր,
Երեք օրւան թագաւոր:

50. ԶԻՆԱՐԻ ԵՄՐԸ

Արե թագաւոր ելաւ,
Իմ չինարի ետըր,
Մեր բանը կուով ելաւ,
Դարգիման ետըր:
Թշնամու սրգին մեռնի,
Իմ չինարի ետըր,
Իրա չար սրտով ելաւ,
Դարգիման ետըր:

Իմ չինարի ետըր,
Իմ չինարի ետըր,
Իմ չինարի ետըր,
Դարգիման ետըր:

Ճրագը վառայ, վառայ,
Հօր հետ վատամարդ գառայ.

Մէր ու ախպէր թող տւի,
Ես իմ սիրածին առայ:

Քարափի ծէրին կանչի,
Թող թշնամին ամանչի.
Արևիդ մեռնեմ, ետը ջան,
Զինարի պէս կանանչի:

51. ԵՐԿԻՆՔԸՆ ԱՄՊԵԼ Է

Երկինքըն ամպել է,
Ի՞նչ անուշ թօն է.
Գամ զըռնէն անցնեմ,
Հոգեակըս հոն է:

Երկինքըն ամպել է,
Գետինը թաց է.
Ետըս քընել է,
Երեսը բաց է:

Երկինքըն ամպել է,
Գետին շաղերով.
Ես քեզ սիրել եմ,
Անուշ խաղերով:

Շորսը զու, մէկիկ ետը,
Տեսնեմ՝ զու ումն ես.
Իրաւ եմ ասում՝
Դու իմ սրբաւումն ես:

52. ՍԱՐԵՐԻ ՎՐՈՎ ԳՆԱՅ

Սարերի վրով գնաց,
Ետը, ետը.

Արօտով, արօտով,
Նարիս կարօտով.
Իմ եարը խրուով գնաց,
Նար, եար.

Մընացիր, մընացիր,
Սալգաթ գընացիր:
Ոչ լոր ելաւ, ոչ կաքաւ,
Նար, եար.

Արօտով, արօտով,
Նարիս կարօտով,
Ջեռնէս թըռնելով գընաց.
Նար, եար.

Մընացիր, մընացիր.
Սալգաթ գնացիր:

Սարիցը մարդ ա գալի
Երի, երի, երի ջան.
Սարը կրակ ա տալի
Երի, մարալօ ջէյրան.
Առաջս եալուիս բացաւ
Երի, երի, երի ջան,
Իմացայ մարդ ա գալի
Երի, մարալօ ջէյրան:

† Ծաղիկ էր հոտով—մոտով,
Եկաւ, անցաւ իմ մօտով.
Աչքս տեսաւ՝ սիրեցի,
Ու մընացի կարօտով:

53. ՇՈՂԵՐ ԶԱՆ

Ամպել ա, ձիւն չի գալի, Շողեր ջան,

Սարիցը տուն չի գալի. Շողեր ջան.
Դուն օրօրա, դուն շօրօրա, Շողեր ջան,
Ամպի տակին ձիւն կերեայ, Շողեր ջան:

Սիրտըս կըրակով լըցւած, Շողեր ջան,
Աչքերիս քուն չի գալի, Շողեր ջան,
Դուն օրօրա, դուն շօրօրա Շողեր ջան,
Ամպի տակին ձիւն կերեայ Շողեր ջան:

Սարի գլխին ձիւն եկաւ,
Շէկլիկ եարըս տուն եկաւ,
Դեռ մուրազիս չը հասած,
Վրէս խորունկ քուն եկաւ:

Աշունն եկաւ սարիցը,
Տերե թափեց ծառիցը.
Շողոն գարգով լըցւել ա,—
Հեռացել ա եարիցը:

54. ԷՆ ԴԻԶԱՆ

Էն զիզան, բէզ—բէզ զիզան,
Տեսէք էն սրն է.

Էն զիզան բէզ—բէզ զիզան,
Թաղւորի մէրն է.

Էն տանու հասան գերան,
Տեսէք էն սրն է.

Էն տանու հասան գերան,
Թաղւորի հէրն է.

Էն լուսին ամպերի տակ,
Տեսէք էն սրն է.

Էն լուսին ամպերի տակ
Մեր թաղուհին է.

էն արեւ երկնուց արեւ,
 Տեսէք էն սրն է.
 Էն արեւ երկնուց արեւ,
 Մեր թագաւորն է.
 Ազաւաներ կռկռալով,
 Տեսէք էն սրն է.
 Ազաւաներ կռկռալով,
 Տիրացուներն են.
 Ճնճղուկներ ծլկլալով
 Տեսէք էն սրն է.
 Ճնճղուկներ ծլկլալով
 Սարգաւակներն են.
 Մուկն եկաւ, պարկն ի բերան,
 Տեսէք էն սրն է.
 Մուկն եկաւ, պարկն ի բերան
 Գիւղի գլխին է:

55. ՍԱՐ—ՍԱՐ

Սար,—սար,
 Ես սարերի ծաղիկն եմ.
 Զան, ջան.
 Ես Լեւոնի քուրիկն եմ:
 Ժամի գրոնէն դուս ելայ,
 Արեւի պէս լուս ելայ:
 Էն սարին սար չեմ տաի,
 Փիս գետիկն ետ չեմ տաի:
 Ինձ չէր առնում թող չառնէր,
 Խօսք ու զրբիցն էլ ի՞նչ էր:
 Հաց եմ թրխել փրփրով,
 Վատ խօսողը քրքրելով:

56. ԱՐԱՋԸ ՀԵՇՏԱՅԵԼ Ա

Արազը հեշտացել ա, եաման ետը,
 Ճամբէքը կոշտացել ա, ետը, ետը.
 Ի՞նչ ասեմ հօրս, մօրս, եաման ետը,
 Դարդերս շատացել ա, ետը, ետը:
 Ծաղիկ ես բաղի միջին,
 Մի հատ ես թաղի միջին,
 Գիշեր, ցերեկ միալար,
 Դու ես իմ խաղի միջին:
 Ձեր բաղից խնձոր քաղեմ,
 Հօրդ գլուխը թաղեմ,
 Թէ քեզ մտեհան անեմ,
 Սեւ սատանի փայ ընեմ

57. ԽԱՆՈՒՄ ԵՒՍ. ԶԱՆ

Բերդիցը դուրս ելայ Ալագեազ տեսայ,
 Խանում եւա ջան,
 Աբարտն աչքերիս գուման ա դառել.
 Դուն կեցիր բարով, ես կերթամ լալով,
 Լալով ողբալով, քեօջ ու բարխանով,
 Սարեր ման գալով:
 Ձեռ ու ստս կապին բերդը ձգեցին,
 Զուխայ շաւար լալով տունը բերեցին.
 Օրեր, գարնան անուշ օրեր,
 Ախ՛, սէր էք կտրեր:

Ոչխարն էսդին կարծայ, էնդին դառները,
 Խանում եւա ջան,
 Կանչըցեր ա ծաղիկները ծառները.
 Դուն կեցիր բարով և այն . . .

Արի քրթանք քու ման գալած արտերը,
Քեզի տեսայ թաժացան իմ գարգերը.

Ես Աղէկն եմ Զամուրիցի մէկ ջիւան,
Տուժսաղ էգայ ըստուց չուրի երևան:

58. ԵՂՍՕ ԶԱՆ

Հէ, հէ, հէ, հօ, հօ, հօ, Եղսօ Զան.

Եղսօն նստե բուրդ կըզգէ,

Հէ, հէ, հէ, հօ, հօ, հօ, Եղսօ Զան.

Յակօն էկե գուռ կը ափէ.

Հէ, հէ, հէ, հօ, հօ, հօ, Եղսօ Զան.

Մալի ա միւղիւր քե զուրբան,

Մալի ա միւղիւր քե զուրբան:

Հէ, հէ, հէ, հօ, հօ, հօ, Եղսօ Զան.

Եղսօիս վրէն խօսացին,

Հէ, հէ հէ

Ի զուր տեղը բամբասեցին

Հէ, հէ, հէ, և այլն:

Հէ, հէ, հէ

Ոսկու բարաբար անունը,

Հէ, հէ, հէ

Յեկի հետ հաւասարեցին.

Հէ, հէ, հէ և այլն.

59. ՂԱՐՍԱՅ ԲԵՐԴԸ.

Ղարսայ բերդը փլել ա,

Եաման եար,

Եարս տակին քնել ա,

Եար, եար:

Ձէն աւի, ձէնս չառաւ,

Եաման եար,

Եարար ինձի մոռցել ա,

Եար, եար:

Մտիկ արէք էն զըշին,

Ոտը գրել ա փշին.

Գլուխս զուրբան կտամ,

Չալ աչք ու կարմիր թշին:

Դու մի հատ թաւան զուշ ես,

Մեր բաղում բուսած նուշ ես.

Աստուած վկայ սուտ չ'կայ,

Ինձ համար շատ անուշ ես:

60. ԱՆՁՐԵԻՆ ԵԿԱԻ

Անձրեն եկաւ շաղալէն,

Ուռու տերե գողալէն.

Վայ, լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ,

Հըրէս եկաւ իմ ախպեր,

Ալ ձին տակին խաղալէն:

Վայ, լէ, լէ, և այլն:

Արաղը հեշտացել ա,

Ճամբէքը կոշտացել ա,

Խարար տարէք իմ նանուն,

Մուշտարին շատացել ա:

Խալիչէքը փրոել եմ,

Նախշուն բարձեր զրել եմ,

Թանուան ջան, քեզ ուտելու

Սեր, կարագ հաղըրել եմ:

Կաքաւ եմ քարամիջում,
 Կը կարգամ ձորամիջում,
 Աստուած, իմ մուրազս անւր,
 Էս գալող շաբթու միջում:

61. ԿԱՐՃԸԼԻԿ — ԿՈՒՐՃԼԻԿ

Սարէն կուգայ ձիաւոր,
 Վայ գիգի գալում,
 Մեր տունը չարգախաւոր,
 Կարճըլիկ—կուրճըլիկ վնջըլիկ Գուլէ:

Հրէս էկաւ իմ ախպէր
 Վայ գիգի գալում,
 Երեք օրւայ թաղաւոր.
 Բռնեց ինձ, գրկեց ինձ
 Համբուրեց եարս ինձ:

Ձեռներդ ծափ ես տալի,
 Մազերդ թափ ես տալի,
 Էսօր էգուց ես քցել,
 Ամեն օր խափ ես տալի:

Բարձր բոյզ տալ չունի,
 Լոյս երեսդ խալ չունի,
 Ձաճիլ եարի մօտ գացի,
 Որ ախրել, ու լալ չունի:

62. ԽՆԿԻ ԾԱՌ

Ալագեաղ սաբն ամպել ա,
 Վայ, է, է, է, է, է, է, է,
 Ախպէրս իր ձին թամբել ա.

Իմ մայրիկ ջան, իմ քոյրիկ ջան:
 Մեր գըռանը խնկի ծառ,
 Գիւլում ջան,

Ձեր գըռանը խնկի ծառ,
 Գիւլում ջան.

Ոսկի կաքաւ վրէն թառ,
 Գիւլում ջան.

Կերթար ու դար շորոր տար,
 Գիւլում ջան.

Վարդը բացել ա հովին,
 Գիւլում ջան.

Բըլբուլը կայնել ա քովին,
 Գիւլում ջան.

Բացի իրնից ձեռք տալու,
 Գիւլում ջան,

Մօտ չի թողնում ոչ ովին,
 Գիւլում ջան:

Ախպէր իր ձին թամբել ա,
 Եարոջ գըռնէն անցել ա:

Եարոջ գըռնէն անցել ա,
 Ելե գաշար խաղցել ա.

Ելե գաշար՝ խաղցել ա,
 Անձրե եկե, թըռջել ա.

Անձրե եկե, թըռջել ա,
 Արե գարկէ՝ չորցել ա:

Արե գարկէ՝ չորցել ա,
 Քան կարմիր վարդ բացել ա:

63. ԷՍ ԳԻՇԵՐ ԼՈՒՄՆԵԱԿ ԳԻՇԵՐ

Էս գիշեր, լուսնեակ գիշեր,
Վայ, լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ.

Ձիւնն եկել գետին նախշեր.
Ո՞վ է տեսել՝ սիրած եարը մոռանայ.
Ով մոռանայ՝ երկու աչքով կուրանայ:

Աչքդ գէ՛մ արա՛ պաղնեմ,
Վայ լէ և այլն.
Կեռ ունքեր, կարմիր թշեր,
Ո՞վ է տեսել և այլն.

Քամին եկաւ հով բերեց,
Եղբ ծնաւ կով բերեց.
Քո ջահել ջանին զուրբան,
Քեզի էստեղ ո՞վ բերեց:

Ա՛յ աղայ, հաւ ու մաշ եմ,
Արի պատկերդ բաշեմ,
Ալ շորերս սե հաղնեմ,
Երեք տարի քեզ կաշեմ:

64. ԲԱՅ ԽՈՒՐՁԻՆԴ

Երեան բաղ եմ առել,
Ջիգեարս դաղ եմ արել.
Բաց խուրջինդ, տուր զանակդ,
Խնձոր կիսեմ, տար եարիս,
Դիլիմ, գիլիմ, գիլիմ, գիլիմ:

Դոստ ու զուգմանի միջին,
Լացս ծիծաղ եմ արել.
Բաց խուրջինդ և այլն:

Կայնել ես կանչում էլ չես,
Բայիցդ ամաչում էլ չես,
Բաց խուրջինդ և այլն:

Էկայ կշտովդ անց կացայ,
Տէր ես՝ ճանաչում էլ չես.
Բաց խուրջինդ և այլն:

Բաղ եմ քցել նոր ի նոր,
Հասցրել եմ մի խնձոր,
Բաց խուրջինդ և այլն:

Եարիս տեսնելու համար,
Քանի ընկնեմ սար ու ձոր:
Բաց խուրջինդ և այլն:

65. ԼՈՒՄՆԱԿՆ ԱՆՈՒՇ

Լուսնակն անուշ, հովն անուշ,
Վայ, լէ, լէ, լէ, լէ,
Վայ, լօ, լօ, լօ լօ,
Շինականի քունն անուշ.

Էրնէկ էն օրեր,
Որ կելնենք ոտեր:

Ծագեց լուսնակն երկընուց,
Հովը՛ի փողն էր անուշ:

Հօտաղն եզներ կարածայ,
Մաճկալ պառկեր քունն անուշ.

Ջրղղուն քամին կը փչէ,
Ծովային հովն էր անուշ:

Դաշտեր, ձորեր մընջեր են,
Զրեր գըլգըլան, ձէնն անուշ:

Հաւքեր թառան իրենց բուն,
Բըլբուլի տաղն էր անուշ.

Անմահական հոտ բուրէր,
Քափուր վարդի հոտն անուշ:

66. ԶԱՆ ՄԱՐԱԼ

Զան մարալ ջան,
Ղարսա բերդը փլեր ա,
Զան մարալ ջան,
Եարս մէջը քներ ա.
Մարալ, մարալ, մարալ ջան,
Զան մարալ, ջան մարալ, ջան մարալ ջան:

Հով արէք, սարեր ջան, հով արէք,
Իմ դարդին դարման արէք:

Ձէն կուտամ, ձէն չի հաներ,
Մագեամ ինձմէն ջուկեր ա:

Զուն դնեմ թաւէն խաշեմ,
Ելնեմ երդիկը աշեմ,
Տեսնեմ եարս գալիս՝ ա,
Զոքեմ չաքմէքը քաշեմ:

Ալագեազ բարձր սար ա,
Զուրը հիւանդի ճարա,
Սիրած սիրածին չեն տալ,
Էս ինչ խարար աշխարհ ա:

67. ԵԱՐ ԵԱՐ

Կայնել ես, կանչում էլ չես,
Եւր,

Բոյիցդ ամանչում էլ չես,
Եւր,

Եար, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ,
նայ, նայ, նայ, նայ, նայ:

Եկար կըշտովս անց կացար,
Եւր,

Տէր ես, ճանաչում էլ չես,
Եւր.

Եար, նայ, նայ և այլն . . .

Այ տղայ հուր ես, մուր ես,
Ես ծարաւ եմ, դու ջուր ես,
Դիպակ ու բէհեզ շոր ես,
Վարդավառ գիշերն ռըր ես:

Այ տղայ օտար լինես,
Սե հաւի կատար լինես,
Ինձ մէկ խումար եար սիրի,
Դու ճոթ ու պատառ լինես:

68. ԱԼԱԳԵԱԶ

Ալագեազ բարձր սար ա, եւր,
Զուրը հիւանդին ճար ա, եւր
Ես սիրեցի, վայ, խալիսը տարան
Իմ ազիզ եարը, ան թէ չառնեմ,
Վայ, ես կը մեռնիմ, իմ ազիզ եարը:

Ուռի ես կեռանալ միր, եւր,

Մեր դռնից հեռանալ միր, եմր.
 Ես սիրեցի, վայ և այլն . . .

Հուսնակը բոլորել ա, եմր,
 Իմ եարը մոլորել ա, եմր,
 Ես սիրեցի, վայ, և այլն . . .

Սիրել ենք իրար կառնենք, եմր,
 Քանի դուշմանը սաղ ա, եմր.
 Ես սիրեցի, վայ, և այլն . . .

69. ՆԱՆԻ ԶԱՆ

Քեզի մեռնիմ էջմիածին,
 Ազատարար Աստուածածին,
 Նանի, նանի, նանի, նանի ջան.
 Նանի դարդերս սարերով է.
 Էրուում եմ, վառվում եմ
 Ճար չունիմ, նանի ջան.
 Զահիլ եմ, ջիւան եմ,
 Զեմ կըրնայ, նանի ջան.
 Նանի, նանի, նանի, նանի ջան:

70. ԲԻՆԳԵՕԼ

Ինչո՞ւ բինգեօլը մտար,
 Բաղի բիւլբիւլը գտար.
 Դը լէ մկօնդէ,
 Պապօն թըխկօնդ է.
 Թըխկօն, թըխկօն, թըխկօնդէ:
 Պապօն կօնդէ թըխկօնդ է,
 Դը լէ մկօնդէ, պապօն թըխկօնդէ:
 Սուսամ սիւմբիւլ,

Բաղի բիւլբիւլ,
 Ինչո՞ւ բինգեօլը մտար,
 Բաղի բիւլբիւլը գտար.
 Դը լէ մկօնդէ և այլն . . .

71. ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳ

Արի գութան, վարի գութան,
 Օրն էկել է ճաշ դառել,
 Առը շուռ տուր խոփիդ դուրբան,
 Օրհնեալ է Աստուած, հօրօվել:

Քաշիր, եղը, ուսիդ մատաղ,
 Քաշիր, քաշենք, վար անենք,
 Ճիպտին արա, քշիր հօտաղ,
 Մեր սև օրին ճար անենք:

Պարտքատէրը զանգատ գնաց,
 Քեօխէն կըգայ, կըծեծի,
 Տէրտէրն օրհնեց, անվարձ մնաց,
 Կը բարկանայ, կանիծի:

Էն օրն էկան, թովջի արին,
 Հարկ են ուզում տէրութեան.
 Ինչո՞ տամ կօռին ու բէգառին,
 Վարի, վարի, իմ գութան:

Զեռս պակաս, ոյժս հատած,
 Հազար ու մի ցաւի տէր,
 Ինձ են նայում, մերկ ու սոված,
 Մի տուն լիքը մաշուկներ.

Յով. Թումանեան.

72. ՀԱՍՍՈՒ ԵՐԳԸ

Ահա ծագեց կարմիր արև
Տաք և պայծառ է օրը,
Դէ, քաշեցէք, սիրուն եղներ,
Յառաջ տարէք արօրը:

Վարը վարենք, աղօս փորենք,
Խոր աղօսներ հողի մէջ.
Սերմը ցանենք, որ հունձ հնձենք,
Տորեան դիզենք կալի մէջ:

Կը դայ ձմեռ—մենք վախ չունենք—
Ուրախ կանցնի մեր օրը,
Ուտելու միշտ պաշար ունենք,
Լի և կուշտ է մեր փորը:

73. ՂԱՐԱԲԱՂԻ ՀՕՐՕՎԵԼ

Ջիգ տու, քաշի, ա՛յ եղը,
Արա, հօ, հօ, հէ՛յ ըրա, հէ՛յ ըրա,
Լիւծըդ մաշի, ա՛յ, եղը,
Արա, հօ, հօ, հօ, հօ, հէ՛յ ըրա, հէ՛յ ըրա:

Աստուած պահի քու տարը,
Մինն էլ կտաշի, ա՛յ եղը:

Գութանն ա՛յ օգած ա,
Եղանց օսը նօթած ա,
Վարը վարի, ա՛յ գութան,
Անշախ խուփն ա՛յ զօգած ա:

Շողըն ընկաւ ծըմակին,
Աստուած կը տայ մշակին,
Սուր գութանը ծէր գնաց,
Հայ մշակը քըմակին:

74. ԳԱՐՈՒՆ Ա

Գարուն ա, ձուն ա արել,
Վա՛յ, լէ, լէ, վա՛յ, լէ, լէ,
Վա՛յ, լօ, լօ, լօ, լօ,
Իմ եարն ինձնից ա սառել:
Ա՛խ, չորնա, վախ, ա՛յ եար,
Հար մարդու լեզուն:

Քամին փչում ա պաղ պաղ,
Լերդ ու թորս անում ա դաղ:

Ե՛տր, ինձ բէմուրազ արիւր,
Սէրդ ինձնէ դատ արիւր:

75. ԳԱՅԷՔ ՏԵՍԷՔ

Գացէք տեսէք, ո՛րն ա կերեր գէժ.
— Գացին տեսան, գէլն ա կերեր գէժ.

Գէլ վըր էծուն,
Էժ վըր ուլուն,
Ուլ վըր թըփան,
Թըփ վըր իւքիւն
Իւք վըր այգայ,
Դէ գընա կուգամ,
Ինչ որ առես
Վըէս կուգայ:
Հալալ է, ջալալ է, ինչ բարի տարի
Էկաւ վըր մեր,
Քու վըր մեր,
Քու վըր ձեր:

Գացէք տեսէք, ո՛րն է կերեր գէլ,
— Գացին տեսան, սուրն է կերեր գէլ

Սուր վրը գէլուն
Գէլ վրը էծուն և այլն:

Գացէք տեսէք, որն է կերեր սուր,
— Գացին տեսան ժանգն է կերեր սուր,
Ժանգ վրը սրուն,

Սուր վրը գէլուն և այլն:
(Կրկնել և ասել) որն է կերեր ժանգը,

Իւզը,

Մուկը, ուլ է տարել
Կատուն, հարսը և փեսան:

76. ՀՈՎ ԱՐԷՔ

Հով արէք, սարեր ջան, հով արէք,
Իմ դարդին դարման արէք.

Սարերը հով չեն անում,
Իմ դարդին դարման անում:

Հով արէք, ամպեր ջան, հով արէք
Իմ դարդին դարման արէք.

Ամպերը հով չեն անում,
Իմ դարդին դարման անում:

Մնացայ Արագն, էն վաթան,
Առայ ես թօփում քաթան.

Ով իմ սիրածն ինձ չ'տայ,
Կարեմ ազիզին պատան:

Հով արէք, սարեր ջան, հով արէք,
Իմ դարդին դարման արէք.

Սարերը հով չեն անում,
Իմ դարդին դարման անում:

77. Ս. ԿԱՐԱՊԵՏ

Սուրբ Կարապետ քո՛ վանքը,
Վա՛յ լէ՛ լէ՛ լէ՛ լէ՛ լէ՛ լէ՛ լէ՛
Վա՛յ լօ՛ լօ՛ լօ՛ լօ՛ լօ՛ լօ՛ լօ՛
Վայ սիրելի ջան.

Ղազարի նախշուն թամբը,
Սրաովը սիրել ես,
Բոլորը թորկել ես,
Վայ անուշիկ ջան:

Արդ էնիմ թագաւորին,
Անցել է հայի կեանքը:

Սև ամպերը պարզում չի,
Սիպտակ եայլուխ սագում չի.
Եօթը տարի ալ հազնեմ,
Սիրաս սև է սագում չի:

Ծիրան եմ ծառի ծերին,
Կերերամ հեա թերերին,
Եկան քաղեցին տարան
Ծախեցին ախմախներին:

78. ՍԱՐԵՐԻ ՀՈՎԻՆ ՄԵՌՆԻՄ

Սարերի հովին մեռնիմ,
Իմ եարի բոյին մեռնիմ.
Էս օր եօթն օր չեմ տեսել,
Տեսնողի աչքին մեռնիմ:
Ախ՛, էնիմ արուն կուգայ,
Սև սրտիս դարուն կուգայ.
Ինչ էնիմ ես էն եարը
Պըտաւի տարուն կուգայ:

Եար եար, եար, եար նա նայ,
Ա՛խ, նանի ջան նանի,
Վա՛յ նանի նանի ջան:

Լուսնակ, դու բարձրանց գնա,
Շուտ արա անցիր գնա,
Թէ՛ իմ եարին տեսնես,
Բարե տուր անցիր գնա:
Ա՛խ, էնիմ և այլն . .

79 ԱՂԱՌԻՍ ԿՈՐԱՆԻ

Աղլուխս կորաւ ձեր գուռը,
Սրաէս գուռս չի գայ մրմուռը,
Բազդը ինձի քցեց Քուռը,
Սիրուն տղայ, տուր աղլուխս:

— Քու աղլուխդ ինձ մօտ չ'կայ,
Ես կը երգւիմ, Աստուած վկայ,
Ով գտել է, թող բերի տայ—
Շէկլիկ աղջիկ, քու աղլուխդ:

Աղլուխս եարիս բաշխածն էր,
Ալ արբեշումով նաշխած էր,
Պատկերս վրէն քաշած էր—
Սիրուն տղայ, տուր աղլուխս:

— Աղլուխիդ տեղը չեմ գիտեր,
Ինձի մէկ անուշ եար պիտեր,
Եարար տեսնես ով է գտեր,
Շէկլիկ աղջիկ, քու աղլուխդ:

80 ՀԱԲԼՐԲԱՆ

Տղայ. Հաբլրբան.
Աղջիկ. ջանէ ջան.

Տղայ. Սիրել եմ՝ սերն երեսին,
Անթառամ՝ թերն երեսին.
Ով իմ սիրածն ինձ չի տայ,
Աստուծու կրակն երեսին:

Աղջիկ. Սարի թըրթընջուկ թաղա,
Մեղր ու շաքար բեզ մաղա.
Ինձ պէս նազանի աղջիկ,
Քեզ պէս տղին հնց սաղա:

Տղայ. Պըզտիկ աղջիկ, համ ունիս,
Չորեքդիմաց ծամ ունիս.
Խունջիկ—մունջիկ մի անի,
Ինձ տունելու կամ ունիս:

Աղջիկ. գութանդ հոլ ան, հոլ ա,
Գութանիդ տակը քոլ ա.
Քանի գըժութիւն անես,
Քեզի առնողը տոլ ա:

Տղայ. Ձեր տան տակին վար կանեմ,
Ձար աղաւին քար կանեմ.
Թող իմ սիրածն ինձի տան,
Գըժութիւնըս թարկ անեմ:

Աղջիկ. Ձուրը իր ճամբով էերթայ,
Ցողածը վարդի թերթ ա.
Ինձ սիրող կըարիչ տըղէն,
Հազարի մէջ մի բերդ ա:

Տղայ. Բուսեկ ես բաղի միջին,
Շամամի թաղի միջին.
Գիշեր, ցերեկ միալար,
Դու ես իմ խաղի միջին:

Աղջիկ. Աշուղի պէս խաղ ասա,
Բլբուլի պէս ասա ասա.
Ինչքան որ զովեա արժեմ,
Իմ մօր զովական փեսայ:

81. ԱԼԱԳԵՕԶ ԱԶԵՐԴ

Ալագեօզ աչերդ, կամար ունքերդ,
Ուզում եմ հեռանալ, չի թողնում սէրդ.
Վսւյ, վույ, վույ, վառւում եմ,
Վսւյ, վույ, վույ, հալւում եմ,
Վույ հալւում, էրւում եմ.
Մայրիկ ջան ջուրն ընկնեմ,
Քուրիկ ջան ծովն ընկնեմ,
Սե եարի դարդիցը:

Էլի եկան գարնան երկար օրերը,
Մարօն հագաւ իրա խառ—խառ շորերը:
Վսւյ, վույ, վույ, և այլն.

Էլի Մարօ, էլի, ինչ նազ ես անում,
Սանամ կաքաւի պէս ֆարվազ ես անում.
Վսւյ, վույ, վույ և այլն.
Ադէ ջան, Ադէ,
Ադէ ջան, Ադէ,
Դարդերս շատ է:

Կանչէ կուռնկ, կանչէ, քանի գարուն է

Ղարիբ աղի սիրար գունդ գունդ արուն է.
Վսւյ, վույ, վույ և այլն.
Ադէ ջան, Ադէ,
Դարդերս շատ է:

82. ԲԼԲՈՒԼ

Գնա, բլբուլ, մեր աշխարհից,
Էլ դու այստեղ մի երգիր.
Մեր օրը սե, մեր կեանքը ցաւ,
Էլ այս երկրում մի երգիր:

Գնա բլբուլ, մեր աշխարհից,
Գնա, երգիր այլ երկրում.
Ասա, այստեղ, որ մեր վարդից
Արեան թարմ հոտ է բուրում:

Որ ողբաձայն մըմնջացող,
Վտակների հոսանքին՝
Միանում են արեան շիթեր,
Առաջ շարժւում մոլեղին:

Որ ծաղկադարձ հովիտներից,
Մահաւան ցուրտ հոտ է փչում,
Որ մեր երկրում կանաչ դաշտերն,
Իսկոյն կարմիր են ներկւում:

Ա՛խ, ջան բլբուլ, էլ մի երգիր
Գնա, պատմիր աշխարհին,
Մեր ցաւ ու հոգս, վիշտ ու թախիծ,
Մեր օրերը դառնաղին:

Ժիրայր.

83 ԴԱՐԴԱ ԼԱՅԷՔ

Դարդս լացէք, սարի սմբուլ,
Ալւան, ալւան ծաղիկներ,
Դարդս լացէք, բաղի բլբուլ,
Ամպշող երկնուց զով հովեր . . .

Երկինք—գետինք զլիսուս մթնան,
Անտուն անտէր կուլամ ես.
Նարիս տարան ջանիս տարան,
Հոնգուր—հոնգուր կուլամ ես:

Ախ, եարս ինձի հանեց սրտէն,
Անճար թողեց ու գնաց.
Սրտիս սուգէն—խորունկ եարէն,
Անգեղ թողեց ու գնաց . . .

Դարդս լացէք, սարի սմբուլ,
Ալւան ալւան ծաղիկներ,
Դարդս լացէք, բաղի բլբուլ,
Ամպշող երկնուց զով հովեր . . .

Ա. Իսահակեան

84. ՄԻ ԼԱՐ ԲԼԲՈՒԼ

Մի լար բլբուլ, քեզ մի տանջիր
Որ փոթորիկն անիրաւ,
Վարդըդ սիրուն, վարդըդ կարմիր,
Թփից պոկեց ու տարաւ:

Կանցնին օրեր, կուգայ կրկին
Մի նոր գարուն վարդաբեր,
Եւ մոռացած քո վիշտը հին
Նորից կերգես վարդին սէր:

Բայց վայ կեանքի այն խեղճ երգչին,
Որ վաղաժամ որբացաւ,
Իւր սիրելի խօսուն վարդին
Սառը հողի մէջ դրաւ:

Երգչի համար գարուն չկայ,
Ոչ էլ նոր վարդ կը սիրէ.
Նա պէտքէ լայ, պէտքէ սրգայ
Մինչ յաւիտեան կըլու է:

Ա. Մանուկեան

85. ԽԱՒԱՐ ԵՄ ԵՍ

Խաւար եմ ես ինչպէս գիշեր,
Իմ չորս կողմս փոթորիկ.
Չունիմ քեզ սէր, չունիմ քեզ սէր,
Ես սիրել եմ հայրենիք:

Այնտեղ անբաղդ, թշուա մայրեր,
Որդեկորոյս ծնողներ.
Եղբայրագուրկ անթիւ քոյրեր,
Թափում են յորդ արցունքներ:

Ինձ մի սիրիր, ինձ մի սիրիր,
Ես շատ ու շատ փոխել եմ.
Առ թաշկինակդ սրբէ աչեր,
Ես քեզ սիրել կարող չեմ:

Մնաս բարեաւ իմ աչքի լոյս,
Սէրդ լինի ինձ խրախոյս,
Այդ արտասուքը ես պիտ թափեմ
Որ իմ ցաւերս սփոփեմ:

86. ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՔՈՒՆԸ

Ա՛խ, տուէք ինձ քաղցր մի քուն,
Կեանքից հեռու սրբանամ
Այն աշխարհը, ուր խնդութիւն,
Ուր սէրն է միշտ անթառամ:

Քնքուշ վարդերն ինձ բարձ լինին,
Վառ կանաչից իմ վերմակ,
Նոցա բոյրը գւարթազին,
Ծծեմ անվերջ ու անյազ:

Եւ խայտալով իմ առաջին
Վտակն անուշ խոխով է,
Մի թարմութիւն եղեմային
Չորս բոլորքս տարած է:

Եւ ինձ ժպտի արշալուսին
Գարնան մատաղ արեգակ,
Եւ գիշերով իմ ճակատին
Խաղաղ զոդորիկ վառ լուսնակ:

Եւ աչագեղ կոյսն աղունջիս
Իւր մեղեգին մեղմ հնչէ,
Եւ հերարձակ սիրով վըզիս
Փարէ քնքուշ, փաղաքշէ . . .

Եւ յաւիտեան վայելչութիւն
Գրկէ հոգիս, չ'յագենամ . . .
Ա՛խ, տուէք ինձ քաղցր մի քուն,
հեռու, հեռու սրբանամ:

Յ. Յովնանյան

87. ՈՐՄԿԱՆ ԱԽՊԷՐ

Որսկան ախպէր, սարէն կուգաս,
Սարի մարալ կը փնտռես,
Ասա, եարար, զու չը տեսնի,
Իմ մարալիս, իմ բալիս:

Դարդի ձեռից սարերն ընկաւ,
Իմ մարալս, իմ բալէս,
Դարդերն առաւ չորերն ընկաւ,
Իմ ջիւանս, իմ բալէս:

Տեսայ, քոյրիկ, ազիզ բալէդ,
Կարմիր պսակ էր կապել,
Սիրած եարի համբոյրի տեղ,
Կրծքին վարդեր էր ծլել:

Որսկան ախպէր, ասա, եարար,
Ո՞վ է հարսը իմ բալիս,
Ո՞վ էր գրկում չոր գլուխը,
Իմ արեւիս, իմ բալիս:

Տեսայ, քոյրիկ, դարգոս բալէդ,
Քարն էր դրել բարձի տեղ,
Հրացանը կրծքին սեղմել,
Սիրած պաշտած եարի տեղ:

Սարի մարմանդ հովն է շոյում,
Ճակտի փունջը մարալիդ,
Ծաղիկները վրէն սգում,
Ջիւան բալիդ, խեղճ բալիդ:

Ա. Բաանակեան.

88. ԱՆԲԱԺԻՆՆԵՐ

Ա՛խ, մեր սիրտը, լիքը դարդ, ցաւ,
Օր ու արեւ չ'տեսանք,
Վա՛խ, մեր կեանքը սեռով անցաւ,
Աշխարհից բան չ'լմացանք:

Հարուստ մարդիկ կուտեն, կ'լամեն
Աշխարհի ճոխ սեղանից,
Մենք աշխարհի խորթ օղերքն ենք,
Մեզ վայ չ'կայ աշխարհից:

Խեղճ աղքատի հողին դուրս գայ,
Քարից—հողից հաց քամ է.—
Բեռով հացը հարուստին տայ,
Հարուստն ուտէ, վայել է:

Խեղճ աղքատը դառը դատի—
Դատարկ նստի . . . Էյ, աշխարհ,
Էլ ինչո՞ւ ես քարը թողնում
Քարի վրայ, քնը—աշխարհ:

Ա. Իսահակեան

89. ԳԱՐՈՒՆ

Քեզ ըստասող չը մնաց,
Ո՞ւր ես գալի, ա՛յ դարուն,
Գովքդ ասող չը մնաց,
Զուր ես գալի, ա՛յ դարուն:

Սե—մութ պատեց աշխարհին,
Սար ու ձոր դառան արին,
Մեզ վայ բերեց էս տարին,—
Ո՞ւր ես գալի, ա՛յ դարուն . . .

Բիւրիւն եկաւ՝ վարդ չունի,
Ծաղկոցը կայ՝ դարդ չունի.
Էլ ո՞վ ա դարդ չունի —
Ո՞ւր ես գալի, ա՛յ դարուն:

Յ. Յովնանեան

90. ԱՐԱՁ

Արազն եկաւ լափին տալով,
Ժեռ քարերին, ափին տալով,
Ո՞րտեղ թաղեմ ես իմ դարդը,
Զոր գլուխս տալին տալով:

Ա՛յ, իմ Արազ, ջուրդ վարար,
Սիրուն եարիս եարաք տեսար,
Ես չը հասայ իմ մութագին,
Արազ, եարաք կարօտս առար:

Ամպերն ընկան Մասիս սարին,
Կարօտ մնացի ես իմ եարին,
Ասուած սիրես, էրուած սրտիս,
Զուգար բերես էկող տարին:

Գիշերն անքուն գիր կը գրեմ,
Արատաունքս գես կը շինեմ,
Արազ, ծէզը ջրիդ հառած,
Իմ սե դարդը քեզ կը բերեմ:

Յ. Յովնանեան

91. ՄԱՃԿԱԼ

Մաճկալ ես, բեղարած ես,
Առը շուռ տուր, շուռ արի,

Ծովի պէս քրտնած ես,
Եղներն արձկի, տուն արի:

Կաթի սերը քաշեր եմ,
Դրեր եմ հովը՝ սառի.
Ալ-զոգնոցս կապեր եմ,
Արի, թառան, թըռ՝ ա արի:

Տեղ եմ քցել շաքում,
Քամին կուգայ զով կանի.
Լուսնի շողքն է մեր ծոցում,
Չափի տուր, չափ սոս—չսոստ արի:

Դադրած, բեզարած եմը ջան,
Ամպերն ելան—դէհ, արի,
Բեզարած ջանիդ զուրբան,
Ծախց թե առ, թէզ արի:

Ա. Իսահակեան

92. ՊԱՆԴՈՒԽՏ ՄՇԵՆՈՒ ԵՐԳԸ

Եօթն օր, եօթ զիշեր,
Շախկամնի դօտիս թոռմշեր,
Եւր մզիկ դռնէն դուս չեխայ
Փշուրմի սիրա մըզիկ խովնայ,
Վայ լէ, վայ լէ, վայ լէ, վայ լէ,
Երթամ Ստամբուլ.
Դատիւմ փարա բօլ,
Իմ եարի խամար
Առնիմ ջուխս մը սօլ.
Արի, եար, արի
Խոռվ մի կենայ,
Աստըւորիս բան,
Եւր, մըզիկ չի մնայ:

Մկրտի քամբախ էրկրէն
Խաբրիկ մէ էկեր,
Թէ տաճիկ լցուեր գեղ,
Ջրմէն թալներ ու տարեր,
Վայ լէ, վայ լէ, վայ լէ, վայ լէ
Խայեր, վախ, խայեր,
Շիւար էք մացեր,
Չիմնաք մըր էրկրի
Լացերն ու թացեր:
Արի, եար, արի,
Խոռվ մի կենայ,
Աստըւորիս բան,
Եւր, մզիկ չի մնայ:

93. ԹԱԼԱՆՆ ԷԿԱԻ

Թալանն էկաւ թալնեց տարաւ մեր մալը,
Քեափուրն էկաւ զարկեց տարաւ մեր մալը:

Քուրան էկաւ սարի կողէն,
Խարաջ վերուց մըր հողէն,
Չարկեց էն շան սատկըցուց,
Էրիցու տղայ Պօղէ:
Թալանն էկաւ և այլն:

Ալ քօղով խարսեր տարան,
Մընք մացինք գելու բերան,
Մըր ճըժերն ու աղջիկներ,
Չընք գինա թէ դօր կորան:
Թալանն էկաւ և այլն:

Էլ չկայ օր ու արե,
Կորաւ մըր անուշ բարե,

Աստուած զըմէն կու տեսնայ,
 Նստուկ մըր զլիսու վերեւ:
 Թալանն էկաւ և այլն:

94. ԻՄ ՄԱՀԸ

Եթէ գժգոյն մահու հրեշտակ
 Անհուն ժպտով մ'իջնէ իմ գէմ,
 Շողիանան ցաւքս ու հոգիս,
 Գիացէք որ գեռ կենդանի եմ:

Եթէ անարքս իմ տիպար
 Մոմ մը վախա ու մահադէմ,
 Ո՛հ, նշուլ է ցարս ճառագայթ,
 Գիացէք որ գեռ կենդանի եմ:

Եթէ ճակատիս արտօնարգօծ
 Զիս պատանի մէջ ցուրտ գերթ վէմ
 Փաթթեն, դնեն սե զաղաղը,
 Գիացէք որ գեռ կենդանի եմ:

Իսկ աննշան եթէ մնայ
 Երկրի մէկ խորշն հողակոյտն իմ
 Եւ յիշատակս ալ թառամի,
 Ահ՝ այն ատեն ես կը մեռնիմ:

Պ. Գուրեան

95. ՄԱՐՕԻ ԵՐԳԸ

Ես վարէն կուգայի, դուն գուռը բացիր,
 Զեռզ ծոցդ տարար, ախ էրիր լացիր,
 Որ ինձի չառնէիր, ինչո՞ւ խաբեցիր,
 Օյ, Մարօ ջան օյ, եարօ ջան օյ,
 Անուշիկ եար,

Զէ, չեմ առնի չէ, սրտովս չէ,
 Մի մեռնի եար:

Ես վարէն կուգայի, շալակս բուրդ էր,
 Գեղի չորս բուրբ, դօրաւոր սուրբ էր,
 Ես Մարօին կառնեմ, օջախը տուրք էր,
 Օյ, Մարօ ջան և այլն . . .

Կանչէ կռուիկ, կանչէ, տակի չիման է,
 Մարօն իմ դարգերիւ, ախ աճգիւման է,
 Օտար մարդկանց սիրար, լիք, լիք արին է,
 Օյ, Մարօ ջան և այլն . . .

Էլի եկան գարնան երկան օրերը,
 Մարօն հազաւ իրա խառ-խառ շորերը,
 Ինձի քցեց անտէր չողերը,
 Օյ, Մարօ ջան և այլն . . .

96. ԽՕՍԻՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵՌՆԵՐ

Անխղճօրէն մեզ դատում են,
 Խօսիք Հայաստանի լեռներ,
 Եղբայրս ինձանից դատում են,
 Խօսիք Հայաստանի լեռներ:

Իմ լնդրիս չեն դնում ականջ,
 Ասում են-սուտ է քո պահանջ,
 Այս հողերը սեմն էր առաջ,
 Խօսիք Հայաստանի լեռներ:

Գուցէ յիշէք դուք այն օրը,
 Որ պապս լծած արօրը,
 Ցանում էր ձեր դաշան ու ձորը,
 Խօսիք Հայաստանի լեռներ:

Գիտեն իմ պապիս անունը,
Բայց ստում են ուղղութիւնը,
Գոնէ նորա պատմութիւնը,
Խօսի՞ք Հայաստանի լեռներ:

97. ԶԱՆՈՒԴ ՕՐԵՐԸ

Զախորդ օրերը, ձմռայ նման կուգան ու
կերթան,
Վհատելու չէ, վերջ կունենան, կուգան ու
կերթան,
Դառն ցաւերը մարդու վերայ չեն մնայ
երկար,
Որպէս յաճախորդ շարուէ շարան, կուգան
ու կերթան:

Փորձանք, հալածանք և նեղութիւն ազգերի
զլիւից,
Ինչպէս ճանապարհի կարաւան՝ կուգան ու
կերթան.

Աշխարհը բուրաստան է յատուկ, մարդիկը
ծաղիկ,
Որքան մանիշակ, վարդ, պալասան կուգան
ու կերթան:

Ոչ ուժեղը թող պարծենայ, ոչ տկարը
տխրի,

Փոփոխակի անցքեր զանազան կուգան ու
կերթան.

Արեւ առանց վախենալու ցայտում է լոյսը,
Ամպերը դէպի աղօթարան կուգան ու կեր-
թան:

Երկիրը ուստալ գաւակին է փայփայում
մօր պէս,
Անկիրթ ցեղերը թափառական՝ կուգան ու
կերթան.
Աշխարհը հիւրանոց է, Զիւան, ազգերը
հիւր են,
Այսպէս է կանոնը բնական, կուգան ու
կերթան:
Զիւանի

98. ԱՂԱՍԻԻ ԵՐԳԸ

Սար ու ձոր ընկած մէկ չոր թփի տակի,
Գեանին նայելով՝ մնացել եմ նստած.
Զեռս ծոցումս, գլուխս մէկ լեռ քարի
Տըւած՝ լալիս եմ, օրըս խաւարած:

Ամպերն առաջիս, սարերն ետեւս,
Քեզ մօտիկ տալով, այ իմ քաղցր Մասիս՝
Աղի արտասուենքով էրւած, խորոված,
Երեսիդ նայեմ, մնամ քարացած:

— Նազլըս իմ, Նազլու, աննման Նազլու,
Սիրտս խորովի՝ անունդ յիշելով.
Նազլըս, իմ Նազլըս, հրաշալի Նազլու,
Ազատին քեզ տայ իր յետին բարով:
Խ. Աբովեան.

99. ԵՐԲ ԱԼԵԿՈԾ

Երբ ալեկոծ ծովի վրայ,
Իմ մակոյկս խորտակւի,
Ես փրկեալէ՞ք ալեաց մէջը,
Դեռ իմ յոյսը չեմ կարի:

Բոլոր ուժով և համարձակ
Բազուկներս կը շարժեմ,
Ալիքները պտտառելով
Դէպի ավեր կը թռչեմ:

Անհաւատար այդ կուր մէջ,
Թէ ոյժերս ինձ թողնեն,
Ալիքները յորձանք տալով,
Դէպի անդունդ ինձ նետեն:

Այն ժամանակ գէթ սփոփանք,
Ես կը գտնեմ նորա մէջ,
Որ մեռնում եմ քաջի նման,
Կոխ տալով մինչև վերջ:

Ք. Թադևոսեան

100. Ա.Ա.ԳԵԱ.ՋԻՆ.

Սե—մութ ամպեր ճակատիդ դիզւան,
Դուժման հազար, Ալազեանդ,
Սրտումս արեւ էլ չի ծաղկում,
Սիրտս էլ դուժման, Ալազեանդ:

Զառ փէշերդ անցայ, տեսաւ,
Առանց դարդի սիրտ չը կար.
Ա՛խ, իմ դարձըս, ջան Ալազեանդ,
Իմ դարձիս պէս հէշ չը կար:

— Է՛յ, Մանթաշի նըշխուն հաւքեր,
Իմ դարձըս որ՝ ձերն եղնէր,
Ձեր էգ գնդ - վնդ, խառ-փետուրներ
Կը սենային, քանց դիշեր:

— Է՛յ Մանթաշի մարմանդ հովեր,
Իմ դարձըս որ ձերն եղնէր,

Ձեր ծաղկանուշ բոլորմունքը նու՛շ
Թոյն ու տօթի կը փոխէր:

Հէ՛յ վնի . . . կտարան իմ թեւերս,
Ընկայ գիրկըդ, Ալազեանդ.
Ա՛խ, մեծ սրտիդ սրգմեմ սիրտս,
Լամ, արուն լամ, Ալազեանդ . . .

Ս.Ա. Իսահակեան

101. ՎԲԴՈՒՀՈՒ ԵՐԳԸ

Դա շապիկն է, այն քաջ մարդու,
Բալա ջան,
Որ քնդի հայր, նա կոչւում էր,
Յբօր, օրօր, բալա ջան:

Արիւնտ էր, կարմիր ներկւած,
Բալա ջան,
Արտասուքով ես լացի, օրօր, օրօր,
Բալա ջան:

Դէ՛հ մեծացիր, շուտ բոյ քաշիր,
Բալա ջան,
Չարի արին խմել սովորի օրօր, օրօր,
Բալա ջան:
«Ապօն»

102. ՏԱԼԻՈՐԻԿՅԻ ԿՏՐԻՃ

Տալսորիկցի կարիճ եմ խորթ,
Քաղքցու պէս չեմ թուամբրթ.
Սարի գաւակ, քարի սրդի,
Հին քաջ Հայոց իմ մնացորդ:
Տալսորիկցի գաւակ եմ քաջ,

Ձեմ խոնարհիլ թուրքի առաջ,
Քարոտ լերանց ես ազատ լաճ,
Ձեմ տեսել ոչ արօր, ոչ մաճ,
Հայ ախպրտիք, ջան ախպրտիք
Տալսորիկցի զաւակ եմ քաջ.
Ազատութեան սիրոյ համար,
Եկէք դէպ ինձ յառաջ, յառաջ:

Երբ իմ աչեր բացի յաշխարհ,
Ազատ տեսայ մեր սար ու քար,
Մինչև փակեմ աչքս ի խաւար,
Պիտ չ'կոխէ հոս ոտք օտար:
Տալսորիկցի զաւակ եւ այլն

103 ԱՂԲԻԻՐ

Պարզիր աղբիւր, թուրքի աղին ջուր տանեմ,
Պարզիր, պարզիր, քրդի աղին ջուր տանեմ:
Աղբիւր դիտե՛ս, քիւրդը մեզի ի՞նչ կանէ,
Մեզ կտանջի, կ'կողոպտի կսպան է:
Կար ժամանակ, որ մենք այսպէս խեղճ չէինք,
Մեզ պաշտպանող թագաւորներ ունէինք:
Այս անգութին պէտք էր տւած ոչ ցուրտ ջուր,
Այլ՝ տաք գնդակ կամ շիկացրած մի շամփուր:
Այժմ պարզիր, թուրքի աղին ջուր տանեմ,
Պարզիր, պարզիր, քրդի աղին ջուր տանեմ:
Ա. Ղ.

104. ԳԱՐՈՒՆ

Ո՛հ ի՞նչ անուշ եւ ի՞նչպէս զով
Առաւօտուց փրչես, հովիկ,
Ծաղկանց վրայ գուրգուրալով

Եւ մազերուն կուսին փափկիկ,
Բայց չես հովիկ իմ Հայրենեաց,
Գնա, անցիր սրտէս ի բաց:

Ոհ, ի՞նչ աղու եւ սրտագին
Ծառոց մէջէն երգես, թռչնիկ,
Սիրոյ ժամերն ի յանտառին
Ըզմայլեցան ի քո ձայնիկ.
Բայց չես թռչնիկ իմ Հայրենեաց,
Գնա՛, թըռիւր սրտէս ի բաց:

Ո՛հ, ի՞նչ մրմունջ հանես, վտակ,
Ականակիտ եւ հանդարտիկ.
Քու հայելոյդ մէջ անապակ
Նային զիրենք վարդն ու աղջիկ.
Բայց չես վտակ իմ Հայրենեաց,
Գնա՛, հոսէ՛ սրտէս ի բաց:

Թէպէտ թռչնիկն ու հովն Հայոց
Աւերակաց շրջին վերայ,
Թէպէտ պղտոր վտակն Հայոց
Նոճիներմ մէջ կը սողայ,
Նոքա հառանջք են Հայրենեաց,
Նոքա չերթան սրտէս ի բաց:

Պե՛րկրաբան

105. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Ազատ Ասուածն այն օրից,
Երբ հաճեցաւ շունչ փչել,
Իմ հողանիւթ շինւածքին
Կենդանութիւն պարգեւիլ.
Ես անբարբառ մի մանուկ

Երկու ձեռքս պարզեցի,
Եւ իմ անդօր թեւերով
Ազատութիւն գրկեցի:

Մինչ գիշերը անհանգիստ,
Օրօրոցում կապկապած,
Լալիս էի անդադար,
Մօրս քունը խանգարած,
Խնդրում էի նորանից
Բազուկներս արձակել,
Ես այն օրից ուխտեցի
Ազատութիւնը սիրել:

Թոթով լեզւիս մինչ կապերն
Արձակեցան, բացեցան,
Մինչ ծնողքս իմ ձայնից
Խնդացին ու բերկրեցան,
Նախկին խօսքն, որ ասացի,
Չէր հայր կամ մայր, կամ այլ ինչ.
Ազատութիւն գուրս թուաւ
Իմ մանկական բերանից:

«Ազատութիւն», ինձ կրկնեց
Ճակատագիրը վերեւից.
«Ազատութեան գու գինւոր
Կամիս գրեւ յայ օրից:

Ո՛հ, փշոտ է ճանապարհդ,
Քեզ շատ փորձանք կըստաս է.
Ազատութիւն սիրողին
Այս աշխարհը խիստ նեղէ»:
— Ազատութիւն, — գոչեցի. —
Թող որստայ իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկնիք,

Թող դաւ զնէ թշնամին,
Ես մինչ ի մահ, կախաղան,
Մինչ անարգ մահու սիւն,
Պիտի գոռամ, պիտ' կրկնեմ
Անդադար, ազատութիւն:

Մ. Նալբանդեան

106. ՊԱՂ ԱՂԲԻԻՐԻ ՄՕՏ

Պաղ աղբիւրի մօտը կանգնած հայ աղջիկ,
Ջեռին ստփոր բռնած, ջուրն էր անուշիկ.
Մայրիկ իմ զարնեցայ սիրում եմ նորան,
Մի փոքրիկ ակնարկով արաւ ինձ նշան:

Պաղ աղբիւրի մօտը պարտիզում նստած,
Ունինք կարմիր գինի, գառան խորոված.
Մայրիկ իմ զարնեցայ և այլն . . .

Յերեկը անդադար նորան եմ յիշում,
Գիշերը երազում նորան եմ անհունում.
Մայրիկ իմ զարնեցայ և այլն . . .
Ջիւանի

107. ԼՈՐԻԿ

Գացի արաւեր, բռնի լոր,
Աղջիկ տեսայ եայլի ձոր,
Նման էր կարմիր խնձոր.
Լորիկ, ջանում լորիկ,
Գեօղում լորիկ, լորիկ:

Արե գիպաւ սարերուն,
Կաքաւ թուա քարերուն,

Հորիկ կայնե վեր դարուն.
 Հորիկ, ջանում ե այլն . . .
 Առաւօտուն թունդիր մուխ,
 Կլոր աչքեր, ընքեր թուխ,
 Աժիր, Մուշն ու Բուլանըխ
 Հորիկ, ջանում ե այլն . . .

108. ՀԱՄԵՍՏ ԱՂՋԻԿ

Համեստ աղջիկ, ինձ մի տանջիլ չարաչար,
 Չարաչար, սիրուն ջան, չարաչար:
 Հոգիս հոգուդ մատաղ կանեմ ամեն ժամ,
 Ամեն ժամ, սիրուն, ջան, ամեն ժամ:
 Ես հայ, դու հայ, մեր մէջ չկայ խարութիւն,
 Խարութիւն, սիրուն ջան, խարութիւն:
 Նազըն, Նազըն, ինձ մի քցիր սարէսար,
 Սարէսար, սիրուն ջան, սարէսար:
 Մատաղ կեանքումս ինձ մի դնիր գերեզման,
 Գերեզման, սիրուն ջան, գերեզման:

109. ԵՂԲԱՅՐ ԵՄՔ ՄԵՔ

Ի բիւր ձայնից բնութեան շքեղ,
 Թէ երգք թուչին սիրողաբար,
 Մատունք կուսին ամենազեղ
 Թէ որ զարնեն փափուկ քնար,
 Չունին ձայն մի այնքան սիրուն,
 Քան զանձկալի եղբայր անուն:
 Տուր ինձ քո ձեռքդ, եղբայր եմք մեր,
 Որ մըրկաւ էինք գատուած,
 Բաղդին ամեն ոխ չարանենդ

Ի մի համբոյր ցուին ի բաց:
 Ընդ աստեղօք ինձ կայ սիրուն,
 Քան զանձկալի եղբայր անուն:
 Երբ ալեոր Մայր Հայաստան
 Տեսնէ զորդիս իւր քովէ քով,
 Սրտին խորունկ վէրքն դաժան
 Քաղցր արտասուաց բուժին ցօղով:
 Ընդ աստեղօք ինձ կայ սիրուն,
 Քան զանձկալի եղբայր անուն:
 Պե՛հկրաւեան

110. ԵՐԱԶ

Ես լսեցի մի անուշ ձայն, —
 Իմ ծերացած մօր մօտ էր.
 Փայլեց նշոյլ ուրախութեան. —
 Բայց, ափսոս, որ երազ էր:
 Կարկաչահոտ աղբիւր այնտեղ
 Թաւալում էր մարդարիտ, —
 Նա յստակ էր որպէս բիւրեղ.
 Այն երազ էր ցնորամիտ:

Եւ մեղեդին ախուր, մայրենի
 Յիշեց մանկութեան օրեր. —
 Մօրս համբոյրն ես զգացի. —
 Ախ, ափսոս, որ երազ էր:

Կուրծքին սեղմեց կարօտազին,
 Աչքերս սրբեց — շատ թաց էր —
 Բայց արտասուքս քնում էին . . .
 Ախ, այդ ինչո՛ւ երազ էր:
 Ս. Շահազիզեան

111. ԿՌԻՆՅԵՔ ՏՂԵՐՔ

Կուեցէք աղերք, կուեցէք քաջ—քաջ,
Անվեհներ կանգնած թշնամու առաջ,
Ցանկալի է մեզ միշտ ազնիւ մահը,
Հեռու մեզանից ոսոխի ահը.

Այս անգամին էլ ցոյց տանք թշնամուն
Թէ ինչ է հայի ոյժն ու քաջութիւն:

Ահա քրդերը փախչին սարսափած
Ահա գիւղներ արեամբ շաղախւած,
Կրակ տեղացէք անգաղար կրակ,
Փառք մեր ղէնքերին, առատ է գնդակ.
Ահեղ կուլի մէջ իբրեւ հահատակ,
Ի զուր թող չանցնի մեզնից մի գնդակ:

Մենք տօնախմբենք, մեր նախնի քաջեր,
Մեզի կապասեն մեր սէգ եղբայրներ,
Ազատ չենք ծնւած, գէթ մեռնինք ազատ,
Ու մեր սիրտ, հոգի պահենք անարատ.
Դէ, կուէք աղերք, մինչև շունչ վերջին,
Արժանի լինինք փառաց պսակին:

112. ՕՐՕՐՈՅԻ ԵՐԳ

Արի, իմ սոխակ, թող պարտէզ, մէրին,
Տաղերով քուն բեր տղիս աչերին.
Բայց հա լալիս է, դու, սոխակ մի գալ,
Իմ որդին չուզէ տիրացու դառնալ:

Եկ, արեղաձագ, թող արտ ու արօտ,
Օրօրէ տղիս, քնի է կարօտ.
Բայց հա լալիս է, դու ձագուկ մի գալ,
Իմ որդին չուզէ արեղայ դառնալ:

Թող դու, տատրակիկ, քու ձագն ու բունը,
Վույվույով տղիս բեր անուշ քունը.
Բայց հա լալիս է, տատրակիկ մի գալ,
Իմ որդին չուզէ սգաւոր դառնալ:

Կաշաղակ՝ ճարպիկ, գող, արծաթասէր,
Շահի զրուցով, որդուս քունը բեր,
Բայց հա լալիս է, կաշաղակ մի գալ,
Իմ որդին չուզէ սովաղար դառնալ:

Թող որսդ, արի, քաջասիրտ բազէ,
Քու երգը դուցէ իմ որդին կուզէ . . .
Բազէն որ եկաւ՝ որդիս լուցաւ,
Ռազմի երգերի ձայնով քնեցաւ:

Դամառ-Քարխալ

113. ԵՐԳ ՊԱՆԴՈՒԽՏ ՊԱՏԱՆԵԿԻ

Ծիծեռնակ, ծիծեռնակ,
Դու գարնան սիրուն թռչնակ,
Դէպի ուր ինձ ասան,
Թռչում ես այդպէս արագ:

Ա՛խ, թլուր, ծիծեռնակ,
Ծընած տեղս—Աշտարակ,
Անդ շինիր քո բունը
Հայրենի կառուրի տակ:

Անդ հեռու արևոր,
Հայր ունիմ սգաւոր,
Որ միակ իւր որդուն
Սպասում է օրէ օր:

Երբ տեսնես դու նորան,
Ինձնից շատ բարեւ արան,

Աստ, թող նստի լայ
Իւր անբաղդ որդու վերայ:

Դէհ, սիրուն ծիծեռնակ,
Հեռացիր, թռիր արագ
Դէպի հայոց երկիրը
Ծնած տեղս—Աշտարակ:

Դողոխեան

114. ՄԻՓԱՆԱՅ ՔԱՋԵՐ

Լժ, լժ, լժ.—Սիրփանայ սէգ սարի վերայ,
Կարիճները շաապով գալիս են միտնում,
Այնտեղ անմահ որդիք հսկայ լեռան վերայ,
Ձէնք ու զրահի են ընթանում:

Ինչո՞ւ վառում են՝ զինում,
Սանձակոծ ձի հեծնում անհամբեր,
Արիւնը նոցա սրտի մէջ է եռում,
Թըռչում, անցնում սարէսար,
Քանց Սիրփանայ պինդ քամին,
Սլանում են դէպի ցած,
Դաշտի միջին թշնամին
Վառում, զինում է մեծ
Ահեղ, վրէժ նոցա:
Ահեղ կռում թշնամին
Հատու սուսերը հանել,
Ցեղապետին է սպանել,
Նա է վառում քաջերին:

Այժմ բոլոր ցեղն ոտքի կանգնած՝
Թշնամու դէմ մահու մարտի է կանչում
Արեան մեծ վրէժ պահանջում,
Եւ թշնամին պարտուած՝

Թողնում փախչում սարէ սար՝
Յետ է ձգում մեծ աւար:

Արիւն թափեցին, արիւնի փոխան
Արիւն քամեց ծարաւի սուսեր,
Սուրը յագեցած՝ յետ դրին պատեան,
Ելնում են հիմա—սէգ Սիրփանն ի վեր.
Սէգ Սիրփանայ կանաչ գլխին յաղթող
Ցեղն անում է մեծ խնդում,
Եւ ամպերի թանձրութեան միջին
Հսկայ Սիրփանն ամբողջ թնդում.
Էլ չեն գայ մեղ մօտ թշնամիք,
Սուր տեսան մեր պողպատիկ:

Մ. Ա.

115. ՁԱՆ—ԳԻԻԼՈՒՄ

Ծառիս տակը մանիշակ, ջան գիւլում, ջան, ջան,
Իմ ետքը քանց քեզ շիշակ, ջան ծաղիկ, ջան, ջան.
Ութ թումանից անց կենամ ջան գիւլում ջան, ջան,
Քեզ կանեմ ետքիս մշակ, ջան ծաղիկ, ջան, ջան:

Ջաղացս մանի մանի,
Գունս անոյշ կը տանի,
Իմ ետքս սարում՝ քօլում,
Իմ քունս մնց կ'տանի:

Աղջիկ, աղջիկ, ալ աղջիկ,
Աչքերդ չալ—չալ աղջիկ.
Դու մեր տանը հարս պիտի
Իմ քուրը քեզ տալ, աղջիկ:

Սէրն ինձ ա, սաւտան ինձ ա,

Էս պարի զայդան ին՞չ ա.
Բարձր ծառ, քաղցր պտուղ,
Չեմ հաւնի, փայլան ին՞չ ա:

Կանաչ տեփուր մեյտան ա,
Տեսէք՝ իմ եարը տանն ա.
Նոր ծլած պեղիզ մեռնեմ,
Ոսկէթելի նման ա:


Կանգնել ես, կանչում էլ չես,
Բոյիցդ ամաչում էլ չես.
Եկայ կշտովդ անց կացայ,
Տէր ես՝ ճանաչում էլ չես:

Ամպել ա ամպի տակին,
Ծունկս ծնկանդ տակին.
Ես քեզ ո՞ր տեղ սիրեցի,
Մեխակի ծառի տակին:

Տեղ եմ քցել, փոթ կ'տայ,
Բարձ եմ դրել՝ սոթ կ'տայ.
Մեռնեմ միջի քնողին,
Անոյշ խնկահոտ կ'գայ:

Ա՛յ տղայ, իր անիլ տո՛ւր:
Մի մատը գիր անիլ տո՛ւր.
Ինձանից քեզ ճար չ'կայ,
Քաբուլդ վեր անիլ տո՛ւր:

Մտիկ արէք էն զուշին,
Ոտը դրել ա փուշին.
Մեռնեմ չալ—չալ ունքերին.
Թուխ աչք՝ կարմիր թշին:



116. ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԴԱՐՉ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱ-
ՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Արիք, Հայկազունք, յառաջ ընթանանք,
Սահմանադրութեան նոր բարե մ'ալ տանք.
Որ Ազգն երբ գԱնի փրկարար գոչեց,
Նոր հոգի, նոր կեանք Անոր պարգևեց:
Եկայք, բարեկամք, առ բարձրեալն Աստուած,
Ուղղենք մեր մաղթանք սուրբ սրտէ բղխած.
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն:

Հայեր, միանանք մեր մօրն հետ, օրհնենք,
Զանոնք, որ մեզի աւին սուրբ օրէնք.
Սահմանադրութեան բարեաց փոխանակ,
Թող վարեն ուրախ կեանք մի փառունակ:
Թող և մեր որդիք հետ անոնց անւան
Բիւրաւոր տարիք օրհնեն ու կարգան.
Կեցցէ, կեցցէ, և այլն . . .

Ավանեսն

117. ՀԱՅ ԱՊՐԻՆՔ

Հայ ապրինք եղբարք, մարդկութեան մէջը,
 Հայ կնքեր է մեզ պատմութեան էջը.
 հայ անւամբ զմեզ կ'ողջունէ երկինք.
 Եղբարք, հայ ապրինք,
 Եղբարք, հայ մեռնինք:

Հայ ապրինք, մեր հայրն է, այն դիւցազուն,
 Որ ազատութիւն սորվեցունց մարդուն.
 Ու մեզ վեհ անուն մը տւաւ բաժին.
 Եղբարք, հայ ապրինք,
 Եղբարք, հայ մեռնինք:

Հայ ապրինք,—ո՞ր ազգ էայ Հայուն նման,
 Որ ունենայ հին պարծանքներ այնքան,
 Ո՞ր ազգ Հայուն պէս շքեղ հայրենիք.
 Եղբարք, հայ ապրինք,
 Եղբարք, հայ մեռնինք:

Նար—Պէյ.

118. ՄԱՐԾ ԶԵՅԹՈՒՆՏՈՒ

Զէյթուն, անկախ դու աշխարհիկ,
 Քո սար ու ձոր են անառիկ,
 Ամեն մի քար և անկիւնդ
 Շաղախել է քո արիւնդ,
 Հէլլէ, հէլլէ, հէլլէ, հէլլէ, հէլլէ:

Դեռ ևս քո զօրեղ բազկում
 Ռուբինեանց երկիրն է շարժում,
 Յիշատակ նախնի դիւցազանց
 Պատկերն է քո քաջ դաւաճանց:
 Հէլլէ, հէլլէ

Մզրախա է ունեցած կայքն,
 Քո ապրուստն է և քո կայքն,
 Բռնութեան լուծն թուրք մարդու
 Էդ զէնքով ես թօթափել դու:
 Հէլլէ, հէլլէ և այլն . . .

119. ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՆՔԸ

Մայր Արաքսի ափերով,
 Քայլամուր զնում եմ,
 Հին—հին դարուց յիշատակ,
 Ալեաց մէջը պտրում եմ:

Բայց նոքա միշտ յեղյեղուկ,
 Պատր ջրով եզերքին,
 Դարիւ դարիւ խփելով,
 Փախչում էին լալագին:

Արաքս՝ ինչո՞ւ ձկանց հետ
 Պար չես բռնում մանկական,
 Դու դեռ ծովը չի հասած,
 Սգաւոր ևս ինձ նման:

«Խիզախ, անմիտ պատանի,
 Նիրհա ինչո՞ւ դարեւոր,
 Վրդովում ես, նորոգում
 Իմ ցաւերը բիւրաւոր»:

Էլ չի խօսեց Արաքսը,
 Յորձանք տւեց ահագին,
 Օղակ օղակ օձի պէս
 Առաջ սողաց մոլեգին:

Դամաստ—Քարիպա

120. ԾՈՎԱԿԻ ԵԶԵՐՔԻՆ

Զայն տուր, ու ծովակ, ինչո՞ւ լուռ ես,
Ողբակից լինել չ'կամիս դժբախտիս.
Շարժեցէք, զեփիւռ ալիքը վէտ վէտ,
Խառնեցէք արտասուքս այս ջրերիս հետ:

Հայաստանի մէջ անցքերին վկայ,
Սկզբից մինչ այժմ, խնդրեմ ինձ ասա,
Մի՞թէ միշտ այդպէս կ'մնայ Հայաստան
Փշալից անապատ երբեմն բուրապատ:

Մի՞թէ միշտ այդպէս ազգը խղճալի
Կլինի ծառայ օտար իշխանի,
Մի՞թէ Աստուծոյ աթոռի մօտին
Անարժան է հայն և հայի որդին:

Արդեօք գալո՞ւ է մի օր, ժամանակ,
Տեսնել Մասիսի գլխին մի դրօշակ.
Եւ ամեն կողմից պանդուխտ հայազգիք
Դիմել զէպ իւրեանց սիրուն հայրենիք:
Բաֆֆի

121. ՊԱՆԴՈՒԽՏ ԱՌ ԿՌՈՒՆԿ

Կռունկ, ուսա՞մ կուգաս, ծառայ եմ ձայնիդ.
Կռունկ, մեր աշխարհէն խաղրիկ մի չունի՞ս.
Մի վազիր՝ երամիդ շուտով կը հասնիս.
Կռունկ, մեր աշխարհէն խաղրիկ մի չունի՞ս:

Թողեր եմ ու եկեր մըլքերս ու այգիս.
Քանի որ ան կ'անեմ կու քաղւի հողիս.
Կռունկ, պահ մի կացիր, ձայնիկդ ի հողիս,
Կռունկ, մեր աշխարհէն խաղրիկ մի չունի՞ս:

Աշունն է մօտեցեր, գնալու ես Թէպտիր.
Երամ ես ժողվեր հազարներ ու բիւր.
Ինձ պատասխան չտուիր, ելար գնացիր,
Կռունկ, մեր աշխարհէն դէ՛հ գնա հեռացիր:
Տիւրքու Մկրտիչ

122. ԿԻԼԻԿԻԱ

Երբ որ բացւին դռներն յուսոյ,
Եւ մեր երկրէն փախ տայ ձմեռ.
Զքնաղ երկինս մերս Արմենիոյ,
Երբ փայլէ իւր քաղցրիկ օրեր:
Երբ որ ծիծառն ի բոյն դառնայ,
Երբ որ ծառերն հագնին տերև,
Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արև:

Տեսի դաշտերն Լնորիոյ,
Լեռն Լիբանան և իւր մայրեր.
Տեսի զերկինս Բաալիոյ,
Վենետիկ և իւր կոնտոլներ:
Կզգի նման չիք մեր Կիպրեայ,
Եւ ոչ մէկ վայր է արգարև.
Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արև:

Հասակ մը կայ մեր կենաց մէջ,
Ուր ամենայն իղձ կ'աւարտի
Հասակ մը ուր հէզին ի տեսնչ.
Յիշատակաց իւր կարօտի:
Յորժամ քնարս իմ ցրտանայ,
Սիրոյն տալով վերջին բարևս.

Երթամ հնջեմ յիմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ:

123. ՅԱՌԱՋ

Բամբ, որոտան բարձուստ բոմբիւնք Արարատեան
դաշան ի վայր,

Արի արանց արիւնք յեռանգն առատանան
ի հրազայր.

Հրաւէր հայրենեաց հըռչակի 'նդհանուր,
Հոգիք Հայկազանց բորբոքին ի հուր.
Որք երկնաւորի պսակին էք կարօտ,
Որք երկնաւորիս փառաց երկնահորդ,
Հապօն, արի արանց մանկունք,
Հայրենավրէժքդ Հայկազունք,
Հապօն ի զէն գունդազունդ
Յեռեալ ի սլար թունդ ի թունդ՝
Ի զէն ի վրէժ, ճն անդր յառաջ,
Ի զէն ի վրէժ, մի ձախ մի յաջ,
Օ՛ն անդր յառաջ, մի ձախ մի յաջ,
Օ՛ն անդր յառաջ, յառաջ յառաջ,
Հապօն յառաջ:

124. ԻՂՋ ՊԱՆԴԻՏԻՆ

Թէ թե ունէի, ո՛հ կը թռչէի
Ազատ Մասեաց սարերն ի վեր
ես ուժգին, ես ուժգին:

Անկէ ձեզ հայեր կարդայի հրաւէր,
Անկէ ձեզ հայեր կարդայի հրաւէր.
Թեկէք հայեր ըլլամք մէկ սիրտ,
մէկ մարմին,

Սիրեմք ընկեր, զընկեր սիրեմք
կաթողին:

Թէ դեռ յիմ արիւն չխառնուէր թոյն,
Դեռ երակացս մէջ աշխոյժ խաղային,
Ո՛հ քանի՜ հպարտ կանչէի ազատ:
Թեկէք հայեր ըլլամք և այլն . . .

125. ՊԼՊՈՒԼՆ ԱԻԱՐԱՅՐԻ

Ով դու բարեկամ այրած սրտերու,
Խօսնակ զիշերոյ, հոգեակ վարդերու,
Երգէ պլպուլիկդ, երգէ ի սարէդ,
Զանմահ քաջքն Հայոց երգէ հոգւոյս հետ:

Թաղէի վանուց ձէնիկդ ինձ զիպաւ,
Սրտիկս՝ որ ի խաչն էր կիս՝ թունտ առաւ,
Ի խաչին թեկն թուայ ու հառայ,
Պատայ զքեզ ի դաշտ քաջին Վարդանայ:
Ալիւսն

126. ԱՌ ԶԵՓԻՒՌՆ

Զմեռն անցաւ, զարունն է արդ,
Բլբուլի դէմ բացուում է վարդ,
Լեռներ, դաշտեր զորգով ծածկւած,
Կենդանութեան արին նոր զարդ:

Շող լուսնեակին,
Կոյսն ցւ ծաղիկ,
Միմեանց զգուին

Սիրատարփիկ:
Ա՛խ, փափկասուն մանկիկ զեփիւս

Անուշ հոտով ծաղկանց սփիւռ,
Աղբերց վրայէն լուսակարկաշ
Ինչպէս թռչին կուսին առաջ:

127. ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ ԵՐԳԸ

Հիմի էլ լռենք, եղբարք, հիմի էլ,
Երբ մեր թշնամին իր սուրն է գրբել,
Իր օրհասական սուրը մեր կրքեքին,
Ականջ չի զընում մեր լաց ու կոծին,
Ասացէք, եղբարք Հայեր, ինչ անենք,
Հիմի էլ լռենք:

Հիմի էլ լռենք, երբ մեր թշնամին
Դաւով, հրապուրքով տիրեց մեր երկրին,
Ջընջեց աշխարհից Հայկայ անունը,
Հիմքից կործանեց Թորգոմայ տունը.
Խըլեց մեզանից թագ և խօսք և գէնք.—
Հիմի էլ լռենք,

Հիմի էլ լռենք, երբ մեր թշնամին
Խըլեց մեր սուրը—պաշտպան մեր անձին,
Մըշակի ձեռքիցն էլ խփել խըլեց,
Այդ սուր ու խփից մեր շղթան կրսեց,
Վա՛յ մեզ, շղթայով կապած գերի ենք,—
Հիմի էլ լռենք:

Թո՛ղ լըռէ մունջը, անդամալոյծը,
Կամ՝ որոց քաղցը է թշնամու լուծը,
Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ,
Եկ անվախ ելնենք թըշնամու առաջ,
Գոնէ մեր վառքը մահով յետ խըլենք
Ու այնպէս լռենք:
Դամառ—Բարիպա

128. ՎԵՐՋԱՒԱՆ

Լռեց: Ամպերը եկան ծածկեցին
Երկինքն, ու Լուսինն աչքէս խեցին,
Մնացի մենակ՝ հոգիս վրդոված,
Ձեռներս ծոցիս, գլուխս քարշ արած:
Եւ այնուհետեւ ամեն իրիկուն
Մնում եմ լուսնի խաղաղ ծագելուն.
Նորա տխրամած դէմքը նայելիս,
Յիշում եմ թշառ վիճակը ազգիս:
Ախ՛, ցոլա՛, փայլէ՛, տխրագէ՛մ լուսին,
Գուցէ՛ քու փայլեց փայլ տառ և Հային,
Պատմէ՛ շատերուն Վարդանի մահը,
Կամ ինչպէս կորաւ Հայ ազգի գահը,
Կամ՝ ինչ՞ վեհ սիրով սիրում էր Վարդան
Մայրենի հողը—աշխարհն Հայաստան:
Գ. Ք.

129. ՆՆՋԵԱ ՎԱՐԴԱՆ

Ննջեա՛ Վարդան, անուշ քնով,
Օրօր կասեմ ու նանի,
Քնոյ հրեշտակ իւր թեւերով,
Քո երեսին հով կանի.
Օրօր, օրօր իմ գաւակիս,
Օրօր, կասեմ հրեշտակիս:

Գիտես արդեօր, ո՞վ էր պապդ,
Եւ ինչ՞ գործեր նա արաւ,
Նա Վարդանն էր, որ իւր գործով,
Հայրենիքին փառք բերաւ.
Օրօր, օրօր և այլն, . . .
Քո անունն է, նոյնպէս Վարդան,

Քաջ վարդանին նմանիր,
Նորա տւած օրինակով,
Հայրենիքիդ ծառայիր:
Օրօր, օրօր և այլն . . .

130. ՊԱՆԴԽՏԻ ԵՐԳ

Օտար երկիր, օտար պանդուխտ կը հեծեմ,
Դու հայրենիք, քեզ յիշելով կ'արտասուեմ.
Զկայ ծնող, չկան որդիք, քոյր, եղբայր,
Զիք ամուսին, որով ցաւերս մեղմանայ:

Օտար երկին, արև, աստղեր և լուսին
Թէ և պայծառ՝ ինձի խաւար կը թւին.
Բնակարանս՝ տխուր պանդուխտ օտարաց,
Օդս օտար, ջուրս օտար, օտար հաց:

Ու՞ր է հայրս, ու՞ր է մայրս քաղցրանուն,
Ու՞ր գաւաղունքս, ու՞ր սիրելիքս սիրասուն.
Սակայն ունիմ քովս Յիսուս, փրկէ զիս,
Նա օտար չէ, նա իմս է, սիրէ զիս:

131. ՊԱՐԶ ԳԻՇԵՐ

Մի գեղեցիկ պարզ գիշեր էր,
Երկինքը լի աստղերով,
Եւ լուսինը մեղմ փայլում էր,
Կաթնանըման իւր լուսով:

Նա նայում էր, լռիկ մնջիկ,
Իբրև սի կոյս գէտի վան,

Նորա աչքին երևում էր,
Բիւր ցաւալի տեսարան:

Նա տեսնում էր անթիւ քրդեր,
Աւած սուր, թուր, հրացան,
Կոտորում են, կողոպտում են
Աւերում են Հայաստան:

Եւ կարծես թէ երկնքիցը,
Ասում էր այդ լուռ վկան.
Վրայ հասիր հայ ազգասէր,
Զեռքից գնաց Հայաստան:

Ս. Սափարեան

132. ՀԱՐԱԻԻ ՄՐՄՈՒՆԶԸ

Դոյրերիս մէջ միշտ սղազգեաց, ինձ նման տխուր
չկայ,
Դժոխքումն էլ իմ ունեցած կրակիս պէս հուր
չկայ,
Ծարաւ, պապակ այրւում եմ, ո՛հ, մի կաթիլ
ջուր չկայ,
Սպասում եմ այցելութեան. ո՛չ մի տեղից լուր
չկայ:
Իմ տարիքս անցնում են շուտ, զլորւում են
հանապազ,
Ախ, իմ յոյսս, իմ փափագս կը համարւի միշտ
երազ,
Որտեղ ձայն ու շարժում լսեմ, կվազեմ այնտեղ
վազ,
Սպասում եմ այցելութեան, ո՛չ մի տեղից լուր
չկայ:

133. ԳԱՐՈՒՆ

Գարուն, կանաչ և ծաղիկներ,
Բերաւ փռեց մեր լեռներում.
Հայ իշխանի հատու սուսեր,
Խաղաղութիւն մեր սրտերում:
Բայց երանի, անանց լինէր այս գարուն,
Եւ ծաղիկներ, միշտ փթթէին անթառամ,
Եւ խաղաղ կեանք մեր ազգակցաց համարիւն
Երկար ամօք բաշխէր երկինք բարեխնամ:
Բայց վա՛շ, բնութեան գեղեցկութիւն,
Պիտի աւրէ ծերուկ ձմեռ,
Եւ հայ սրտի խաղաղութիւն
Սուր թշնամու աշխարհաւէր:
Օն՛, աղջիկներ, սլառաստեցէք մեզ պաշար,
Ձմրան սաստիկ ուժի զէմը առնելու,
Իսկ մենք տղայք, առնենք սուր և հրացան,
Մեր թշնամեաց կառավարները ջարդելու:

134. ԶԵՅԹՈՒՆՅՈՑ ՄԱՐՇԸ

Քանի թմրենք, բուռէ, եզրաբք
Շրջենք աչեր, աջ ու ահեակ.
Շատ սարուկներ եղան ազատ,
Միայն մենք միանք հըլու հպատակ:
Զէյթունցիներ մեր զրօսանք
Է պատերազմ և արշաւանք.
Սուր, թուր, գնդակ և հրացան,
Մեր խաղալիքն են յաւիտեան:
Կեցցէ Զէյթուն, ապրի Զէյթուն,
Թող չըտեսնէ սարկութիւն.

Քանի ունի մեզ պէս որդիք,
Ապրի Զէյթուն, կեցցէ Զէյթուն:

135. ԵԼԷՔ ՀԱՅԿԱԶՈՒՆՔ

Ազատութեան այն վառ սէրը,
Թող որոտայ մեր սրտում,
Իմ հայրենեաց սուրբ անունը,
Ինձ պատերազմ է կանչում.
Տրա, լա, լա, լա, լամ:
Ելէք, ելէք, Հայկազունք,
Ելէք, Հայկայ զաւակունք,
Ելէք, ելէք, հայ եզրայրներ,
Առնենք մեր սուր նիզակներ.
Տրա լա, լա, լա, լամ:

Այս օրերը, մեր քաջ կեանքին,
Նւիրական թող լինին,
Ով սիրում է ազատութիւն,
Թող չ'մոռնայ Հայ անուն,
Տրա լա, լա, լա, լամ.
Ելէք, ելէք և այլն:

136. ԵՐԳ ՅԱԿԱԳԻՆ

Իմ սիրելի զաւակունքս,
Կթափառին օտար աշխարհ.
Ես սուր դիմեմ, սուր փնտռեմ.
Կծառայեն այլոց խոնարհ:
Եկայք, որդեակք իմ,
Ձեր մօրն այցելութեան:
Դարեր անցան, լուր մը չ'առի,
Իմ քաջերս մեռան, կորան,

Կուրսմ, արիւնս կը սառի,
Մէկը չունիմ տայ ինձ դարման:
Եկայք, որդեակք և այլն, . .
Արիւնս ցամքած, սիրտս մաշած,
Դէմքս է տխուր մինչ յաւիտեան,
Եւ կարօտոյն իմ որդեկաց,
Պիտի իջնեմ սև գերեզման:
Եկայք, որդեակք և այլն:

137. ԹՈՂ ԶԵՐԳԷ ԲԸԼԲՈՒԼ

Թող չ'երգէ բըլբուլ Մշոյ դաշտերում,
Եւ երգ չը հնչէ Սասնոյ լեռներում.
Թող ժպիտ չըգայ հայերուս դէմքին,
Թող թախիծ տիրէ հայերուս սրտին:

Մշոյ դաշտերը արիւնով ներկւած,
Հայոց սրտերը վշտով են պատած.
Սասնոյ լեռները լի են դիերով,
Մշոյ դաշտերը ներկւած արիւնով:

Էլ ինչո՞ւ ծաղկի քաղցրահոտ շուշան,
Հայոց եղեմի դաշտում աննման.
Քանի հայ աղջիկ չէ զարդարելու
Զքնաղ իր կուրծքը շքեղ պճներու:

138. ՎԱՆԵՅՈՅ ԶՈՒՆՈՒԱԳԸ

Բաւ է, եղբայրք, վիզը ճըկել,
Ողորմելի երեւել,
Ժամանակը հասել է
Հայ դրօշակին ծածանել:
Հայոց լերինք թո՛ղ թընդան,

Հայոց բերանք թո՛ղ դուռն,
Հայաստանի դաշտերում
Քաջ հայերու գիլ «ուռն»:
Արիւն վոթէ թո՛ղ Հայը,
Աղաղակէ միշտ ուռն,
Մեր թշնամին այսուհետ
Սրտի վախէն թո՛ղ դողայ:
Այսուհետև արտասուք
Վախկոտները թո՛ղ հեղուն,
Հայքս արդէն պատրաստ ենք
Վոթել ազնիւ մեր արիւն:
Ու չենք դադրիլ վոթելու,
Մեր Հայ, ազնիւ արիւնը,
Մինչև ազգը չի ստանայ
Իրա ազատութիւնը:
Ախ ու վախը մենք մոռցանք,
Այժմ գիտենք մենք ուռն.
Հայք, գոչեցէք միշտ ուռն,
Որ թշնամին մեր դողայ:

Գամառ.—Քարիպա

139. ՄԻՆՉ ԴԵՌ ՅՈՒՍՈՎ

Մինչ դեռ յուսով խայտայ բնութիւն
Յետ դառնաշունչ ձմեռայնուն.
Եւ ի նաւառն իմ հայրենեաց
Գեղածիծաղ դառնայ դարուն:

Մինչ բոյր ի բոյր փթթին ծաղկունք,
Եւ ճուղին նորեկ ծիծռունք.
Ի քեզ ես դարձ առնեմ յայնժամ,
Ով ցանկալիդ իմ Հայաստան:
Ոչ Հելւետեան ինձ դաշտավայրք,

Եւ կամ դարձ մարդագետինք.

Ոչ քան զքեզ չքնադագեղ,

Իտալական պայծառ երկինք:

Հեռի ի քէն պանդուխտ գոլով,

Քոյովդ յար տապիւմ անձկով,

Ի խանձարուրդ իմոց կենաց,

Ո՛վ Հայաստան, առնում ես դարձ:

140. ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստան, երկիր դրախտավայր,

Դու մարդկանոյ ցեղիս որբան,

Դու և բնիկ իմ հայրենիք.

Հայաստան, Հայաստան, Հայաստան:

Ի վեհ անունդ սիրտ իմ, ո՛հ, յոյժ

Ոգետրի ի նոր խրախոյս,

Եւ անձկայրեաց ի քեզ յուսամ.

Ի քեզ՝ ի քեզ, յոյս իմ միայն.

Հայաստան, Հայաստան, Հայաստան:

Հայաստան, անուն վարելի,

Ի քեզ հանգիստ Նոյեան տապան

Եզրիս և քե ապրեցաւ Նոյ.

Հայաստան, Հայաստան, Հայաստան:

Հայաստան ծնող զիւցազանց

Եւ հրաշալեաց հանդիսարան,

Քո զեփիւռին քաղցր է շնչին.

Հայաստան, Հայաստան, Հայաստան:

Յ. Մ. Վանանդեցի

141 ՆՊԱՏԱԿԻՍ ՀԱՍՆԵՄ ՄԻԱՅՆ

Նպատակիս համեմ միայն,

Թող զիս հանեն կախաղան,

Կախաղանից խեղդուկ ձայնով

Պիտի գոչեմ միս Հայաստան:

Ա՛խ, Հայաստան, սիրտս ու հոգիս,

Քեզ նւիրեմ ընդունէ.

Թէ կարելի, թող ես մեռնեմ,

Թաք Հայաստան ոտքի ելնէ:

Թէ մինչև իսկ աքսորւիմ ալ,

Թափառական զանէ զիս բախտ.

Հայաստանի սիրոյն համար.

Փշոտ վայրեր կըլլան դրախտ:

Ա՛խ, Հայաստան դու սիրուն վայր,

Մինչ երբ այսպէս քո որդիք,

Քեզնէն հեռի պիտ հառաչեն,

Իսկ զմէք մինչ երբ թափառիր:

142. ՆՊԱՏԱԿԻՍ ԳԷԹ ՄԻ ՄԱՍԸ

Նպատակիս գէթ մի մասը կատարեմ,

Ետրալի բըլբուլն եմ.

Հայրենիքիս ազատութիւն տեսնեմ ու մեռնեմ,

Տուն արի, շուտ արի, ետրալի բըլբուլն եմ

Սարերի զիւլն եմ:

Ա՛խ, իմ դարդս շատացել է, չեմ կարող զալ,

Ետրալի բըլբուլ եմ,

Դարդի ձեռքից, որ ջուրն ընկնեմ ազատեմ.

Տուն արի, շուտ արի և այլն.

Ախ, անբախտ հայդուկիս, Տէր իմ, դու խղճայ,
Եարալի բըլբուլն եմ.

Մի թողնիր թուրքի զնդակով զուր գնամ կորչեմ,
Տուն արի, շուտ արի և այլն . . .

Առաջ ցաւս մէկ էր, հիմա դառաւ տաս,
Վախ-գիտի, բլբուլն եմ.

Այս դառը ցաւերին ես ոնց զիմանամ,
Տուն արի, շուտ արի և այլն . . .

143. ՆՈՐ ՏԱՐԻ

Երնէկ, թէ այս նոր տարին,
Վերջ տար Հայի ցաւերուն.
Չարը կորչէր, ու բարին
Բուն զնէր մեր սրտերուն:

Երնէկ, թէ այս նոր տարին,
Ազատ շնչէր Հայաստան,
Եւ շուրջ Մասիս մեր սարին
Փայլէին արտ—անդաստան:

Երնէկ, թէ այս նոր տարին,
Ոտքի կանգնէր Հայաստան,
Եւ կիսաքանդ մեր Կարին
Լինէր քաղաք մեր ոստան:

Երնէկ, թէ այս նոր տարին,
Հայ ազգ ի մի գումարւէր,
Ի գլուխ Կարնոյ Հայ ամբին
Հայի զրօշակ ծածանէր:

Գ. Քարիպա

144. ԻՏԱԼԱՅԻ ԱՂԶԿԱՅ ԵՐԳԸ

«Մեր հայրենիք թշառ, անտէր,
Մեր թշնամուց ոտնակովս,
Իւր որդիքը արդ կանչում է,
Հանել իւր վրէժ, քէն ու ոխ:

«Մեր հայրենիք շղթաներով
Այսքան տարի կապկապած,
Իւր քաջ որդւոց սուրբ արիւնով
Պիտի լինի ազատւած:

«Ահա, եղբայր, քեզ մի դրօշ,
Որ իմ ձեռքով զործեցի,
Գիշերները ես քուն չ'եղայ,
Արտասուքով լւացի:

«Ամենայն տեղ մահը մի է.
Մարդ մի անգամ պիտ' մեռնէ.
Բայց երանի՛, որ իւր ազգի
Ազատութեան կը զոհւի:

«Գնա՛, եղբայր, Աստուծ քեզ յոյս,
Ազգի սէրը քաջալեր.
Գնա՛ թէ և չեմ կարող գալ,
Բայց իմ հոգին քեզ ընկեր:

Մ. Նալբանդեան

145. Յ Ո Յ Ս

Թող փչէ քամին պաղ—պաղ երեսիս,
Վերէն ամպերէն սաստիկ ձիւն թոյ գայ.
Որքան որ կուգէ թող փչէ Հիւսիս,
Յուսով եմ վաղ-ուշ, գարունը պիտ գայ:

Թուխարը թող պատէ երկինքը պայծառ,
Թանձր մառախուղ երկիր թող փակէ,
Տարերք աշխարհիս խառնէին իրար,
Յուսով եմ վաղ— ուշ, արեւ պիտ ծագէ:

Թող դայ փորձութիւն, թող դայ հալածանք,
Խաւար թող դառնայ անաղօտ լոյսը,
Սարսափելի չեն հային տառապանք,
Միայն . . . չի հատնէր խղճուկի յոյսը:
Գամառ-Քաղիպա

146. ԱԶՆԻԻ ԸՆԿԵՐ

Ազնիւ ընկեր, մեռանում եմ,
Բայց հանգիստ եմ ես հոգով,
Իմ թշնամիք ես օրհնում եմ,
Օրհնում եմ քեզ Աստուծով:

Հեռանում եմ, անդին ընկեր,
Զ'գնահատւած ոչ սքից,
Բայց հաւատաւեալ անձնանքէր,
Ազգիս մշակ կհաշւիմ:

Ազնիւ ընկեր, չը մոռանաս,
Անդաւաճան, ջերմ սիրով,
Ես սիրել եմ իմ հայրենիք,—
Գնահ և դու նոյն շաւղով:

Խեղճութիւնը Հայոց ազգի,
Կարեկցաբար մտածիր.
Ոսկէ զրքոյկն Եղիշէի
Քաջ առաջնորդ ընտրիր:

Այնտեղ սուրբ կրօն, ազգ միաբան
Ազատ կամքով ու խղճով,

Այնտեղ Վարդան, անմահ Վարդան,
Իւր խնկելի քաջերով:

Հայրենիք,—սեղան սրբութեան—
Ես Աստուծոյ առաջն.
Շատ կնգաչեմ, շատ կ'արտասուեմ,
Որ ծագէ քեզ նոր արև:

Իմ մտերիմ, մահս մօտէ,
Բայց հանգիստ եմ ես հոգով.
Որովհետև խիզա արդար է,
Ծշմարտութեան ջատագով:

Ա. Շահաղիգեան

147. ՀԱՅ ՄԵՌՆԻՆՔ

Հայ մեռնինք:

Ո՛չ, եղբայրք, ո՛չ, օտարներէն չկայ յոյս,
Մի աչուրներդ դարձնէք յայս յայն կոյս,
Օտարն զձեզ թէն սիրէ հիւրաբար,
Օտարն, ահ, միշտ է օտար:

Օտարը ձեր վիշտ կ'դիտէ անգորով,
Ինչ փոյթ, որ դուք թափէք արցունք արիւնով,
Ով որ հայ չէ, հայուն ցաւերն ան չզգար,
Ինչ կ'խաբուիք անգաղար:

Մի դուք ձեր յոյսն, մի աւանդէք օտարին,
Մի խոր վէրքերդ ցուցնէք անգութին,
Արգահատանս կը յուսայք, օգնութիւն,
Ձեզ կը ծաղրէ մերկութիւն:

Նար—Պէյ.

148. ՕՐՀՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ

Տէր՝ կեցո՛ր Դու զՀայս,
Եւ արա զնոսա պայծառ.

Կեցո՛ր զՀայս.

Զողորմութիւնդ վերին
Հաճեաց ձօնել նոցին,
Զի նովիմք մարթասցին

Ապրիլ յաստիւ:

Ո՛վ Տէր մեր, Տէր փութա,
Զազգ մեր համայն փրկեա

Ի թշնամեաց.

Կափո զաչս նոցուն
Հատ զարմատոյն զբուն,
Եւ զազգ մեր պարտասուն

Արա հօր:

Ի քո իջեալ տեղի.
Զաթոռ Հայրապետի

Մեր հաստատեա.

Զերկարութիւն կենաց
Հօր մեր աստուածազգեաց
Շնորհեա՛ պետին մեր հարց,

Որ զմեզ հովուէ:
Թաղիանոսեան

Յ Ա Ն Կ

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Սիրուն թռչնակ	5
Թռչնիկն ահա	5
Մեր ձագուկը	6
Ծիտը ծառին ծըլլելումէ	6
Հա՛ ծագեցաւ արեգակը	6
Ճուրաբ փշեց	7
Երկու փոքրիկ նապաստակ	7
Ննջիր մանկիկ	8
Ժամկոչ եղբայր	8
Մայրիկին ֆայտօն բերին	9
Համբարձման երկուշարթին	10
Սիրուն թիթեռ ինձ ասա	10
Ահա եկաւ նոր տարի	11
Մարտը տալիս է ձնծաղիկ	12
Սիրուն անմեղ իմ գառնուկ	12
Էս օր ուրբաթ է	13
Արիք, ընկերք, շուտ արէք	13
Դեռ ուր է ծիծեռ	14
Արագիլ, բարով եկիր	14
Ահա եկաւ մեր գարուն	15
Մարտն անցաւ	16
Մայիսը նոր օր բերում	16
Մանիք, մանիք իմ ճախարակ	16
Ծածկեց փողոց սիւստակ ձիւնով	17
Գնացէք տեսէք	18
Աղջկերք, պար ընկեցէք	19
Ազուէս գնաց	20
Մենք երաժիշտներ ենք	21

Պ Ա Ր Ե Ր Գ Ե Ր

Լէպ հօ լէ, լէ	23
Դէհ տղայք ելնենք	23
Ելէք մանչեր	24
Հօյ, նազան իմ,	25
Էլ ա էրթիս, տիի,	25
Իմ զլիւն ֆութէն կիտամ	26
Գուժանը հաց եմ բերել	27
Կոտ ու կէս կորեկ ունիմ	28



Կուռտիկ ունիմ դեղին ա.	29
Ինչինար եար ջան.	29
Տուն արի, տուն արի .	30
Հօյ եար, հօյ եար .	31
Վարդ կօշիկս .	32
Մարալօ, ջան մարալօ .	32
Ուստի՞ կուգաս .	33
Սօնա եար, Սօնա եար .	33
Ելնենք սարերը սէյրան .	34
Առնեմ, երթամ էն սարը .	35
Ալ ու ալանս հազել .	35
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՒ ԽԱՌՆ ԵՐԳԵՐ	
Մեր դռանը խնկի ծառ .	37
Դու նստել ես դօշակին .	37
Արև թռվում էրաւ .	38
Երկինքն ամպել է .	39
Սարերի վրով գնաց .	39
Ամպի ա, ձիւն չի գալի .	40
Էն դիզան, բէդ-բէդ-դիզան .	41
Սար-սար, ես սարերի ձաղկին հմ .	42
Արաղը հեշտացի ա .	43
Բերդիցը դուրս ելայ .	43
Հէ, հէ, հէ, եղսօ ջան .	44
Ղարսայ բերդը վրել ա .	44
Անձրեն եկաւ շաղալէն .	45
Սարէն կուգայ ձիւսոր .	46
Ալագեաղ սարն ամպել ա .	46
Էս գիշեր, լուսնեակ գիշեր .	48
Երեան բաղ հմ առել .	48
Լուսնակն անուշ, հովն անուշ .	49
Ջան մարալ ջան .	50
Կայնիլ հս, կանչում էլ չիս .	51
Ալագեաղ բարձր սար ա .	51
Քեզի մեռնիմ էջմիածին .	52
Ինչու բինգեօլը մտար .	52
Արի դութան, վարի դութան .	53
Ահա ծագեց կարմիր արև .	54
Ձիգ տու, քաշի .	54

Գարուն ա, ձուն ա արել .	55
Գացէք տեսէք ձրն է կերեր գէծ .	55
Հով արէք, սարեր ջան .	56
Սուրբ Կարապետ քո վանքը .	57
Սարերի հովին մեռնիմ .	57
Աղլուխս կորաւ ձեր դուռը .	58
Հարբըբան .	59
Ալագեօղ աշերդ .	60
Գնա, բլբուլ մեր աշխարհից .	61
Դարդս լացէք .	62
Մի լար բլբուլ .	62
Խաւար հմ ես ինչպէս գիշեր .	63
Ախ, տուէք ինձ քաղցր մի քուն .	64
Որսկան տիպէր, սարէն կուգաս .	65
Ախ մեր սիրտը լիքը դարդ .	66
Քեզ բապասող չմնաց .	66
Արազն եկաւ լափին տալով .	67
Մոճկալ ես, բեղարած ես .	67
Եօթն օր եօթ գիշեր .	68
Թալանն էկաւ թալանեց տարաւ .	69
Եթէ դժգոյն մահու հրեշտակ .	70
Ես վարէն կուգայի .	70
Անխղճօրէն մեղ դատում են .	71
Ձախորդ օրերը, ձմեռայ նման .	72
Սար ու ձոր ընկած , , , ,	73
Երբ ալեկոծ ծովի վրայ, , , ,	73
Սե-մութ ամպեր ճակարկ գիզան , ,	74
Դա շապիկն է , , , ,	74
Տալուրիկի կարիճ հմ խորթ , ,	74
Պարզիւր աղբիւր , , , ,	76
Ոհ ինչ անուշ ե ինչպէս դով , ,	76
Ազատ Աստուածն այն օրից , , , ,	77
Պող աղբիւրի մօտը, , , ,	79
Գացի արտեր բռնի լոր, , , ,	79
Համեստ աղջիկ , , , ,	80
Ի բլբլ ձայնից , , , ,	80
Ես լսեցի մի անուշ ձայն , , , ,	81
Վաւեցէք տղերք , , , ,	82

Արի, իմ սոխակ , , , ,	82
Ծիծեռնակ, ծիծեռնակ , . , ,	83
Լօ, Լօ, Լօ, , , , ,	84
Ծառիս տակը մանիշակ, , , ,	85

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐ

Արիք հայկազունք , , , ,	87
Հայ ապրիլի եղբարք , . , ,	88
Զէյթուն, անկախ , , , ,	88
Մայր Արաքսի ափերով, , , ,	89
Ձայն տուր, ով ծովակ , , , ,	90
Կոռնակ, ուստի կուգաս, , , ,	90
Երբ որ բացւին դռներն յուսայ , , , ,	91
Բամբ, որոտան բարձուստ , , , ,	92
Թէ թե ունէի , , , ,	92
Ով դու բարեկամ , , , ,	93
Ձմեռն անցաւ , . , , ,	93
Հիմի էլ լռենք եղբարք, , , ,	94
Լուց: Ամպերը եկան , , , ,	95
Ննջեա վարդան , , , ,	95
Օտար երկիր, օտար պանդուխտ կը հեծեմ, , , ,	96
Մի գեղեցիկ պարզ գիշեր էր, , , ,	96
Քոյրերիս մէջ միշտ սղազգեստ , , , ,	97
Գարուն, կանաչ և ծաղիկներ , , . ,	98
Քանի թմբենք բաւէ եղբարք , , , ,	98
Ազատութեան այն վառ սէրը, , , ,	99
Իմ սիրելի զաւակուներս, , , ,	99
Թող չերգէ բլրուլ , , , ,	100
Բաւէ, եղբարք վիզը ճկել , , , ,	100
Մինչ դեռ յուսով , , , ,	101
Հայաստան, երկիր դրախտավայր , , , ,	102
Նպատակիս հասնեմ միայն , , , ,	103
Նպատակիս գէթ մի մասը կատարեմ , , , ,	103
Երնէլ թէ այս նոր տարին , , , ,	104
Մեր հայրենիք , , , ,	105
Թող փչէ քամին, , , ,	105
Աղնիւ ընկեր, մեռանում եմ , , , ,	106
Հայ մեռնինք , , , ,	107
Տէր կեցո դու զՀայս , , , ,	108

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ, ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ

Սալտիգ. Սիւնեցու Քնարը (սպառ.) գինը 10 ո.
Սաղանդարեան—Պատկերներ (4 պատմեաձք) 15 կ.
,, ,, Կալանաւորը Որդեսպան — 5 կ.
,, ,, Նոր—Քնար. (ժողով. երգերի) 30 կ.

Վաճառում են Թիֆլիս „Դուտտեներեզ“ գրախա-
նաւանոցում.

Պահասը գտնւում է Դորիսում, „ՍԱՍՈՒՆ“ գրա-
խանութում:

Հասցէն՝ Герюсы-книжный-магазинъ „САСУНЬ“

ՀՀ Ազգային գրադարան



NL0362498

73.172